

6284

706mg/14

168

2003

2021

891.99
4-75

Ա Ա Օ

ԴԻՒՑԱԳՆՈՒՃԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



Հ. ՊՈՂԻՆ
1910

891.99

4-75

12968
000

29612-Կ.Հ.

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏԻՆ

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№ 35

(5113-56)



(13153-58)

ԴՐԱ ԲԱՐՁՐԻ ԵՎ ՌԵԿՈՎԻ ՀԱՅՐ

(ՄԱՐՕ-ԻԼ)

ԳՈՒ

nr առաջինը՝ Սօհիալիզմի փրկարար
Դրօշը ձեռիդ, Հայ իրականութեան մէջ
ասպարէց իջար,

ԳՈՒ

nr մարդանեւր գաղափարներով սե-
րունդնեւր պատրաստեցիր,

ԳՈՒ

nr սրբազն ՈՒԽԾի առաքեալներին
հոգի սիր, եւ

ԳՈՒ

nr հայածւածների եւ զրկւածների պաշ-
պանը դարձար,

ՔԵՇ եմ մայրում իմ այս երկը:

Ա. Ա. Օ



Տ. 6213:

ԴԻՒՅԱԶԱԳՆՈՒՀԵՒՆ

Ա.

Ա... քաղաքի հարուստ թաղամասի ընդարձակ հրապարակի հարսւային կողմում, բազմայարկ, հոյակապ և շքեղաշէն բնակարանների շարքում, ամենասպատառոր և աչքառու տեղ բանում էր ծերունի, պաշտօնաթող հրամանատարի տունը, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ փոքրիկ մի պալատ։ Արտաքուստ՝ պատերը, գոների և պատուհանների շրջանակները, ներկայացնում էին բազմապիսի գեղազարդ շինուածքներ և կենդանանկարներ։ Ներսում, խրաքանչիւր մի սենեակ իւր կարսպիներով և զարդարանքներով, յափշտակում էր նայողի ուշք ու միտքը, և նրան ժամերով կաշկանդում, իրմով զբաղւելու, իրեն դիտելու համար միայն։

Երեկոյ էր։ Դիշերը իւր խաւարահիւս և համապարփակ վրանը ամբացրեց երկրի երեսի վրա։ Խաւարը անթափանց էր, և վրանի տէրը՝ գիշերային թագաւորը, ասես, խղճաց, արհեստական կերպով մութի գէմ կուելու միջոց չտւնեցողներին, վառեց վրանի կատարից, զարդարանքի համար կախ արած անհամար կանթեղները։

Աղնւականների բնակավայր հրապարակի ելեկարական ճրագները լուսավառեցին և շրջապատը ոգողեցին

լիակատար կերպով։ Գոյնզգոյն փայլը անդրադառնալով
երիներանգ ներկւած պատերի, լուսամուտների ապակի-
ների և նկարուն դռների վրայից, կաղմում էր հմայքու-
մի տեսարան, նման եօթներբորդ երկինքի եթերային
լուսաւորութեան, ուր՝ ինչպէս և այստեղ, գեղեցկու-
թիւնն ու մաքրութիւնը, հրաշքն ու արւեստը, իրար
միախառնւած, ստեղծել էին երազ, երեւակայական հիա-
նալի մի ամբողջութիւն։

Զինուորական ալեզարդ հրամանատարին տան ներ-
քին փառահեղութիւնը աւելի էր շեշտւած։ Ելեկտրական
լուսաթելերը և լեզւակները լուսամիտիող գոյնզգոյն և
զանագանակերպ ապակիների չքնար և ակնախտիզ ճա-
ռագայթները՝ ճառճրագների շուրջկողքերից կախւած
բիւրեղեայ շիթերը, գերթ սաստիկ ձմրան ծառածիւղերին
կապւած սառոցի կտորներ, իրենց թափանցիկ կազմւած-
քի մէջ ընդունելով, կոտորակների էին վերածում,
ըեկեղեկում, գունաւորում և ապա վերադարձնում տի-
րոջը, ընծայում շրջապատին։

Տանը տիրում էր անոյշ մի խաղաղութիւն, ասես,
ինչ որ անխմանալի և անմատչելի մի աներեւոյթ ննջում
լինէր, որի նինջն ու հանգիստը ո՛չ ոք չէր յանդգնում
խռովել։ Ծառաներն ու սպասուհիները՝ կոկիկ և սպիտակ
հագնւած, մատների ծայրերով ուշիկ ուշիկ շարժւում
էին։ արագութեամբ մաքրում էին նախընթրիքի ճոխ և
բարելից սեղանը, ապակեայ և արծաթեայ բաժակները,
ամանները սաստախաղարդ պահարանների մէջ տեղաւորե-
լով, անխօս, անսալմուկ։

Դահլիճում, թաւշապատ գահաւորակի վրա, ընկող-

մանել էր ծերունի զինուորականը : Նա խաղում և կատակներ էր անում իր ծնկներին նստեցրած սպիտակաբուրդ չնիկի հետ :

Հոչակաւոր նկարչի վրձինով և գունագեղ գոյներով կենդանագրած երկու մերկ կիներ ներկայացնող պատկերների ոսկէքանողակ շրջանակների մէջտեղումը դրած էր նկարուն ժամացոյցը . Նա միօրինակ և շարունակական տակառով պատճել և միաժամանակ ճամբայ կտրելով ոլաքները հասցրել էր ութը թւանշանի վրա , երբ յանկարծ իր մեքենայական փոքրիկ կառուցւածքը աղմկեց , անիւների ատամները չվաչխկացին , ապա թռչնիկի մի գլուխ դուրս թռչելով կատարից , ճայնեց՝ Ոչի՞նչ . . . ու դարձեալ անհետացաւ :

Քիչ յետոյ նա կրկն դուրս ցատկեց , այս անգամ կանոնաւոր և սրտագրաւ ճայնով կանչեց՝ կուկուր . . . կուկուր . . . և այսպէս ութը անգամ :

Շնիկը վար ցատկեց , պոչը շարժեց , գումուց և պլաստուն աչքերով ուզիղ ժամացոյցին նայեց , ապա սուր , ճչուն ճայնով հաչմչեց :

— Ոչի՞նչ . . . Ուրեմն ժամի ութն է , ծանրօրէն ասաց հրամանատարը , ոտքի ելնելով նայեց իւր ծոցի ժամացոյցին էլ . — Ճիշտ ու ճիշտ ութն է , կրկնեց նա , յետոյ մօտեցաւ պատին , հուպ տեց փայլուն կոճակը և դառնալով չնիկին ասաց : — Հը դուք էլ կը բարեհանէք , սիրելիս , ընկերանալ տիկնոջ և ինձ ազնւականների ժողով վարան պարահանողէսի գնալու :

Տակաւին չան պատասխանը չմած , դուռը բացւեց , ներս եկաւ երիտասարդ սպասուհին , կիսամերկ կուրծքով

բհսուն և վերջապէս յիսուն հազար օժիտ-բաժին կ'ու-
ղենք, եթէ չէք տալ, տարէք ձեր աղջկանը թթու դրէք
քօրչի համար»։ բայց այս թողնե՞նք, մի կարեւոր գործ
մոռացութեան տւած մարդու նման ասաց Կօլեան,
ուշացա՞նք, շատ ուշացանք։ Մանեա կառքը պատրա՞ստ է։

—Պատրաստ սպասում են տէ՛ր ի՞մ, պատախանեց
սպասուհին, որ զբաղած էր տիկնոջ զգեստները և նրանց
ծուռումուռ ծալքերը ուղղելով։

—Բէլկան չի գալու, կատեա։

—Ո՛չ, նա սաստիկ զբաղւած է, պատրաստում է
վերջնական քննութեան, նա ո՛չ միայն ակումք չի մտա-
բերում, այլ շատ անգամ ճաշն ու թէյն է մոռանում։
Խեղա աղջիկս, ե՞րբ պիտի աղտառի այս չարաչար աշ-
խատանքից, սատանան տանէ, հալւեց ու մալւեց գրել
կարդալով, երեսին գոյն ու ժպիտ չմնաց, ասաց կատեան
մայրական կարեկից խանդաղատանքով։

—Լա՛ւ է, իր տեղն է՛, ես հազար անգամ նրան
ասացի որ այդքան աշխատելը ի զուր է, չէ՛ որ ամէն
բան պիտի վերջանայ վկացականով, ոսկէ մեղալով, և
բոլոր ջանքերը դրանց համար են միմիայն։ Գլխաւոր վե-
րատեսուչը բարեկամս է, խօսքիցս դուրս չի գալ, կա-
սիմ նրան, որ համ լաւ վկացական տայ՝ բոլոր ուսմունք-
ների համար հինգուխաչ թւանշաններով և թէ առաջին
աստիճանի ոսկէ մեղալ, և եթէ նա, վերատեսուչը հա-
մարձակւէր չեմուչում անել, այն ժամանակ պիտի մի
հարիւրանոցի գլուխը ցաւցնէի և շատ շատ մի քանի շիշ
թունդ օղի, ու ամեն բան կը վերջանար, բայց նա չը-
սեց, յամառեց, ասաց՝ թէ ես կաշառքով վկացական չեմ

ուզում, դէ՛ թող հիմա հացից էլ, խաղից էլ, զւարձութիւններից էլ զրկւի ու տանջւի:

— Իմ Բէլկան չի ուզում գնւած վկայական ունենալ, նա ուրիշ աղջիկ է, հպարտութեամբ ընդհատեց կինը:

— Մեզանում այժմ ամեն բան դառնում է կաշառքով, դրամով, մնացեալները բան չարժեն. սուտ է, կաշառքով կարելի է մինչեւ անգամ Աստծուն այստեղ բերել.

Այս ու կին իրար յետեւից ցած իջան սանդուխներից: Զօրականի սուրը երբեմն երբեմն թոյլ կերպով դիպչում էր ու և է կարծր առարկայի և չսկում. տիկնոջ մետաքսէ նրբանիւս զգեսանների խշոցը, ինչպէս ցորենի հասուն հասկերի վրայով սուրացով մեղմիկ հովի ձայնը, լեցնում էր տան լուս և դատարկ միմնոլորտը, հաղիւ լսելի ազմուկով:

Նրանք արդէն տեղաւորուած էին դրան առաջ կանգնած կառքում, երբ տիկինը մինչեւ այստեղ իրեն ուղեկցող սպասուհուն ասաց.

— Մանես, մննք կը վերադառնանք ժամը մէկին կամ երկուսին, սեղանի պատրաստութիւնները հիմակւանից սկսէք. ասա՛ խո՞արարին որ կերակուրներին լուսւադրութիւն դարձնէ, ապա դառնալով կառապանին հրամայողական տօնով ասաց.

— Քնի՛ր և չափ քցիր ձիերը:

Կառապանը պատասխանեց՝ «այս լուպէին տիկի՞ն», չարժեց մտրակը, և ձիերը թռան ու անցկայան քառամբակ:

Մանեան բաւական երկար ժամանակ նայեց սլացող կտոքի ետեւից, գլուխը տարուբերեց, հառաչալից ձայնով, կամացուկ ասաց .

—Գնացին բաղդասորները, երջանիկները այս աշխարհի, շռայլելու և զւարձանալու, կեղծիքով, խարկանքավ և արեան առուտուրով ձեռք բերած հարստութեամբ : Կործանեի՛ս դու աշխարհ, որ շքանշաններով զարդարել ես ա՛յն մարդու կուրծքը, գլուխը պասկել և զրաբանները ոսկիով լեցրել ա՛յն զօրավարին, որ հայրենիքն է ծախել ու դրամի փոխարէն հազարաւոր երիտասարդ զօրքերի թշնամու թնդանօթների առաջն է ձգել դաւաճանութեամբ : Այս խօսքերի հետ նա ուժեղ թափով ձգեց դրան ծանրկէկ փողկը և զոցեց, բարձրացաւ սանդուխներից, մօտեցաւ մի սենեակի, մեղմիւ բաղխեց դուռը . ներսից լսելի եղաւ . «Մաէ՛ք» :

Մանեան ներս մտաւ, ուշիկ-ուշիկ մօտեցաւ սեղանի մօտ նատած օրիորդին և ասաց . — «Գնացին» :

—Բայց ե՞րբ կը վերադառնան, իմ Մանեա, չգիտե՞ս, այդ մասին ոչինչ չասացի՞ն :

—Ինչպէ՛ս չէ, ժամի մէկից-երկուս պիտի վերադառնան, այսպէս ասաց տիկին մայրիկդ, պատասխաննեց Մանեան :

—Այդ շատ լաւ եղաւ : Այսպէս ուրեմն, մօտաւուրապէս հինգից վեց ժամ ժամանակ ունինք :

Օրիորդը ծերունի զինուորականի միակ աղջիկն էր : Նա հագիւ տասնեւութը տարեկան լինէր :

Սեղանի կողքին նատած, գլուխը դրած յենորան նեցուկ մի ձեռքի վրայ, մտախոն ու թախծալի դէմքով,

խորհրդաւոր և ապաւորիչ հայեացքները ուղղել էր Մաշնիսին:

Կապոյտ լուսաւորութիւնը, բեկրեկւած գունաւոր,
լուսամիռով ապակու մէջ, իւր անոյշ չողերով պայծա-
ռացնում էր նրա խոհուն դէմքը, աստւածացնում եր-
կուսակեք փոխանակւած լուս մոքերը, բռակի, տեսարանի
անհուն անբանելիութիւնը :

Բէկան համակրելի էր, հմայքոտ և անպայման դի-
մացինի մէջ յարգանք, ազնիւ և վեհ ղբացումներ արթ-
նացնող, գեղեցիկը պաշտել տեղ և այդ պաշտամունքը
սստւածացնող արտաքինով : Նրա հսկակը միջակից բարձր
էր, կազմւածքը անպակաս և բարեհեւ : Գեղեցիկ գլուխը
ծածկել էին հարուստ ծամերի հիւսքերը : Ճակատը լայն
էր, կերեւից և կողքերից նղերուած հերանիւս սեւաթոյր
շրջանակով, վարից՝ երկու կիսալուսածեւ ունքերի կա-
մարները, աննման վարպետի հրաշակերտով գրչի հոյա-
կապ շինւածքների հանգոյն, հովանաւորել էին երկու
կինսալի և նշածեւ աչկունքը, որմնք զերթ հղեմական
աղբրակների ակունք իրենց ճոթերում բոնած կայլակնե-
րը, առես ուղում էին արձակել, բայց չէին զօրում,
խիտ արտեւանուքներից կազմւած պատմէշ թումբերը
խորտակելու : Աչքերից քիչ վար, սպիտակ և թաւշեայ
զոյդ թուշերի վրա անմտական աղբիւների ջրերով
սնւած, անարաստ սպիտակութեան քնքոյշ սրտի վրա
բուսած, երկու վարդեր էին կոկմել, կիսաբացել, ո-
րոնք իրենց թերթիկների բաց կարմիրը, ճիպ-ճերմակ
մարմարի վրա, մեղմացրել, թուլացրել և ստեղծագործել
էին մի նոր գոյն, որը տակուին հմանը չի ունեցել : Այս

չքնաղատես ծաղկանոց դլուխը, նատած էր կտրապի
պարանոցի վրա, նայում և մոգում էր շրջապատին։
Բէլկան մի քանի անգամ անցաւ դէս ու դէն,
անտղեց սեղանի վրա դրւած գրքերն ու թղթերը, և
նրանց ծաղքերի միջից դուրս բերեց մի նկար և ագա-
հութեամբ աչքերը սեւեռեց նրան։ Ներքին մի ուժեղ
յուղում բորբոքեց նրա էութիւնը, և այդ անմիջապէս
արտացոլաց նրա դէմքի վրա։

— Ա՛յ Մարտսա, իմ անգին, իմ պաշտելի Մա-
րտսա, սրտամորմոք ձայնով ասաց օրիորդը և նկարը
բարձրացնելով համբուրեց ու հեկեկաց . . .

— Մա՛նիս, գնա քո բաժին դործը, կատարելիքդ
յանձնարարիր ընկերներիդ, պատրաստիր և շուտով
այստեղ վերադարձիր, որովհետեւ միասին պիտի դուրս
գնանք։

Բ.

Մինչդեռ քաղաքի հարուստաբնասկ և պաշտօնական
շրջանակների բոլոր թաղերը լողում էին ելեկտրական
բազմաթիւ, առատ լոյս մաստակարարութ լապտերների
շողարձակ փողփողանքի մէջ, և հրապարակի լայնք ու
երկայնքը անդադար չափչփում էին սրարշաւ կառքերն
և ինքնաշարժ հանրակառքերը, աղնաւական գեներալ
կօլես իվանովի դուռը բացւեց և այնաեղից դգուշու-
թեամբ դուրս եկան երկու հոգի, ու իրենց քայլերը
ուղղեցին դէպի հարաւային անկիւնը։ Նրանցից մէկը
հաղեցին դէպի հարաւային անկիւնը։ Երանցից մէկը
դէմ մի երիտասարդ էր, միւսը մանկահասակ մի կին էր,

առոյդ և ծիծաղկոտ : Նրանք թեւամսուկ արագ արագ գնում էին, կինը խօսում էր և յաճախակի կատակում և ծիծաղում, խակ երխուսարդը լուռ էր, մտազբաղ և խորհրդաւոր կերպով գլուխը խոնարհած քայլում էր :

Զոյդը մտաւ քաղաքի նեղիկ, ծուռ փողոցները, ուր լուսաւորութեամն խեղճութիւնը, համապատասխանում էր աների և շնուռթիւնների խեղճ, ողորմելի արտաքիշ նին՝ լնդհանուր կառուցւածքներին : Կեանքը ասես դաշդար էր առել, ննջել կամ մեռել էր, չարժունութիւն, ձայն, ծպուտ, երթեւեկ չկար, կային միայն փոքրիկ լուսամուաների ալտուտած ապակինների միւս երեսում, հազիւ նկատելի ու թափանձիկ, ճրագնների փայլը, որոնք ասես գերեզմանների մարմրող, իւղ ձէթ հաստած կամ թեղներ լինէին, ահա՛ արանք էին միայն յարտարար նըանը մարդու ներկայութեամ :

Այս բանուորների, աշխատաւորների թաղն էր :

Մարմատկան բոլոր ուժերը սպասող քրանսալի գործից վերադարձած աշխարհի խորթ տղերքը քնել էին, հանդստանում, իբրև թէ կորցրածը վերստանալու, կազդուրելու, որպէսզի առաւօտեամն վեց ժամը ազդարարող սուլիչի սուր շոյցի հետ միաժամանակ կարողանան ենել ու շարունակել աքնել :

Գործաւորական հանրակացարանների դարապափ առջեւում, մուտքը լուսաւորող լամփի սիւնի տակին կանգնել էին մի քանի հոգի ու խօսակցում էին :

— Բայց ինչո՞ւ այսքան ուշացաւ, նա խոստացել էր դալ ուղիղ ինը ժամին, մինչդեռ տամն անցկացաւ արդէն, նկատեց մէկը :

— Ավ գիտէ ի՞նչ պատահեց, պատասխանեց դիմուցիններից մէկը, զուցէ հաւաքառորութիւն չի ունեցել տառից դուրս ելնելու, և կամ մի անակլնկալ է պատահել, այլապէս նա այժմ այսուեղ կը լինէր, որովհետև նուխտ ճշտապահ է :

— Ա'չ այս, ո'չ էլ այն, միջամտեց երրորդ անձնաւորութիւնը, ամենից հաւանական է որ նա որսկանների ժանկն է ընկել, նրանք այժմ քան երբէք ուժեղ ցանցերով բռնել են ամեն տեղ և շատ սուր հոտառութիւն ունին :

«Որսկաններ» . . . հոտառու և ուժեղ որսորդներ աշնունով էին մկրտել մարդկանց այն ահազին ու ծախւածքաղութեան, որոնք մութ և դաւաճան կերպերով, գործիք, մեքենայ դարձած իշխանաւոր դասակարգի ձեռքում, հետեւում էի «կասկածելիներին», «անբարեցոյաներին» և նրանց որսում կառավարութեան ձեռքը մատնում:

Երկիրը դարձեալ աղմկւել էր, տարրերային շարժումների նախանշան երեւոյթները սարսեցնում էին, ահաւոր գալիքին կարապետող շուկները բերնէ բերան տարածւելով մտքեր էին վրովովում:

Որսորդները, — այսպէս էին ընորոշում դաշտնի սատիկաններին և լրտեմներին —, գործի մկնեցին: Բայց կանոնուորապէս վճարւող սոճիկից, նրանք յաճախ ստունում էին և լու լաւ նւէրներ, արժանանում էին իրենց ստամոքմները վօտկայով (օղի) լեցնելու բաղդին, և ի վերայ այսր ամենայնի, իւրաքանչիւր ցանց ձգածի համար, նայած նրա կարեւորութեանը, պարգեւատրւում

18/123-93

էին խոշոր գումարներով : Տնտեսական անկումը , մնան-
կութիւնը , գործազրկութեամբ սովամահի դատապար-
տող բազմութիւնից մեծ առասութեամբ , առանց սե-
ռի և հասակի խտրութեան , բազմացնում և ստարա-
ցնում էր լրտեսների շարքերը : Հակակառավարական ունէ
շարժում , կառակածելի մի քաղլ նշանաւոր դժուարու-
թեամբ էր արւում , և ահա՛ այս էր պատճառը որ խօ-
սակցողները անհանդիսա էին և մտասանջւում ուշացած
գալողի համար :

— Բարե՛ւ ընկերներ , երեւի ինձ էք սպասում , հա՛ ,
գիտե՛մ շատ էք սպասել , բայց յանցանքը իմը չէ : Դը-
նա՞նք , յետոյ կը պատմեմ :

Այսպէս ասաց զիմուրական սպան , ընկերների ձեռ-
քը սեղմելով : Սա քիչ առաջ ծերունի հրամանաւատարի դըռ-
նից ելնող երիտասարդ այրն էր , որն այժմ մին մինակ
խստրին փողոցի մի ծայրից լոյս ընկաւ : Նրանք ամեն-
քը միասին ներս մտան դարպասից , անցկացան մի եր-
կար , մութ և խոնաւ միջանցքով , որի երկու կողմերուն
տեղաւորւած էին բանտորների բնակարանները , ուրկից
երբեմն լսում էր քնածների խոպոտ ձայները , աքոց-
ները , և յաճախ խորին ու թոքասպան հաղոցներ : Վեր-
ջապէս սրանք կանգ առին մի դրան առաջ , ընկերներից
մէկը զգուշութեամբ բաց արեց գուռը և բոլորը ներս մը-
տան , ապա յետեւներից կողպեցին :

Երբ ամենքը արդէն սենեակումն էին , մէկը մօտե-
ցաւ անկիւնում դրած մանձակալին , մի կողմ քաշեց ,
ուժգին սեղմեց տախտակամաթիւնին փայլող մեխերից
մէկի գլուխը , և յանկայիծ վեց քորի ու ութունի բացւեց և

երեւաց դէպի խորք տամնող անցքի բերանը : Ներկաներից
մէկը ծռացաւ և սուլեց մեղմիւ, զիւ հաջունը սուրաց
նրբանցքի մէջ, զմզմաց և պատասխանը արձագանքեց .
անցքը լուսաւորեց ստորերկեայ նկուղներից մէկից դուրս
բերւած ճրագով, վերինները սկսեցին զգուշութեամբ
ցած իջնել նեղիկ աստիճաններից :

Տան ներքնայարկում, գետնի երեսից մի տասնետկ
կանգուն խոր փորւած երկրի սրտի մէջ, շինւած էր բա-
ւական ընդարձակ մի թագստոց, որը բաղկանում էր մի
քանի սենեակներից և փոքրիկ նկուղներից : Սենեակները
բոլորն էլ լուսաւորւած էին ելէ քարական ճրագներով և
լիքն էին զանազան աշխատանքներով զբաղւած երկեռ
մարդկանցով : Այսպէս, դրանցից առաջինում դրւած էր
տպագրական մի փոքրիկ մամուլ իւր պարագաներով,
միւսումը դարբիններն էին աշխատում սնդանի վրայ,
քուրայի առաջ, զանազան պէտքերի յատկացւած մեքե-
նաների առջև, երրորդում մի խումբ՝ բոլորած սեղաննե-
րի շուրջ գրական աշխատանքներ էր կատարում : Գետ-
նափորը ներկայացնում էր հալածւածների և ընչազուրկ-
ների փրկութեան համար աշխատող գաղտնի մի կուսակ-
ցութեան շրջանային կեդրոնավայրերից մէկը, որպիսիք
անտեսական և քաղաքական անհախընթաց պրկումներից
գալարւող մեծ երկրի մէջ, վերջին ժամանակներում շատ
բաղմացել էին :

Եկորները նորեկին առաջնորդեցին այն սենեակը,
ուր թւով եօթ-ութ հոգի շրջապատելով կլորակ մի սե-
ղան, ինչ որ լուրջ խնդրի համար խորհրդակցում էին :
Նրանց վիճաբանութիւնը երեմն տաքանում, ձայները

բարցրամում էին, իսկ երբեմն, ասես, անլուծելի մի հանրգոյցի հանդիպելով, կանգ էին առնում, լուռ խոկում և մտածում:

— Վերջապէս եկաք, ոտքի ենթալով առաց մէկը, որի գլուխը և երեար մազէ թաւուտներով և մացաներով էին ծածկւած :

— Այո, վերջապէս, պատասխանեց սպան, քիչ էր մնացել որ «Կայսերական հիւրանոց» երթայի, բազմաթիւ հրաւիրակներ էին ուղարկել ինձ ընդառաջելու, բայց էլի ինայեցի ձեզ, չուզեցի վշտացնել ընկերներիս :

«Կայսերական հիւրանոց» էին անւանում Ռուսաստանի խոնաւ և խաւար բանտերը, ստորերկեայ զընտանները :

— Տանից դուրս եկայ մեր սպասուհու հետ թեւանցուկ, և զարտուղի, ծուռմուռ ճամբաներով սկսեցի դէպի այս կողմ առաջմանալ, մի ժամանակ նկատում եմ որ մեզ հետեւում են կասկածելի անձնաւորութիւններ, արդէն հասկցայ որ լրտեսում ենք, չանցաւ մի քանի բոպէ և հետեւորդներից մէկը օգտուելով մի խաւար անկիւնից մեր անցկենալուց, շտապով մօտեցաւ մեղ, դիւսպաւ սպասուհուն և անցկացաւ արագութեամբ : Խորամանկ և վարպետ դարձւածքը քիչ յետոյ պարզեց, երբ մի այլ փողոց մտնելով ճրագի լուսով տեսայ սպասուհու թիկունքի մէջտեղը, զգեստի վրայ փակցւած կարմիր մի կտոր . . . ես վայրկենապէս պոկ տի, օրիորդը ոչինչ չհասկացաւ, բայց միեւնոյն ժամանակ նա էլ տեսել էր իմ զգեստի վրայ կաւիճով գծւած մի նշան, և թաշկինակը հանելով զարմացած սրբեց, մաքրեց :

Շուրջս եմ նայում, դարձեալ լրտեսներ են հետեւում. ի՞նչ անել, ստիպւեցի վերադառնալ մեր հրապարակը, սպասուհուն տուն ուղարկել և ինքս մենակ, հետքըս բազմութեան մէջ կորցրի, կառք նստայ և այժմ ահա ես ձեզ մօտ եմ, . . . փոխանակ կայսերական հիւրանոցի, ընկերների ստորերկրպեայ ընակարգանում: Նա խօսքը վերջացնելով, գլխարկը և ապա մինչեւ ոսների կրոնկները իջող և առջեւից մինչեւ վերջին կոճակը կապած վերարկուն հանեց և . . . կանացի հարուստ ծամերի հիւսքը փուեց ցարդ՝ զինւորական ներկայացողի գլխի և ուսերի վրայ, կանացի զգեստները երեւացին, թեթեւ մի ժպիտ խաղաց նրա դմքին, և չնորհալի բերնի երկու կողքերին սիրունիկ փոսիկներ ձեւացան ու կլանեցին ժպիտի խողերը:

Սպայի համազգեստ կրողը Բէլկան էր . . . ազնւական հրամանատար Կօլես Իվանօվի աղջիկը:

— Շնորհակալութիւն օրիորդ, որ գերադասել էք մեր համեստ գետնայարկը «Ռոմանովեան պալատներից», ուր յաճախ առիթ կ'ունենանք այցելելու այսուհետեւ, ծիծաղով և գաւեշտական արտայայտութեամբ ասաց երբասարդներից մէկը, որը յետոյ աթոռ առաջարկեց օրիորդին; և յետոյ աւելացրեց, — զէ՛ այժմ մեր գործը վերսկանք, կատակ-մատակ մի կողմ թողնենք:

— Ամենից առաջ պիտի կարգադրել Պարսկաստանից գանազան գծերով ստացւելիք հրատարակութիւնների գործը. առաջարկեց ժողովականներից մէկը:

Ես նամակներ ստացայ թաւրիզի; Ռաշտի և Աստարայի մեր մասնաճիւղերից, որոնք յայնում են որ մեծ քա-

նակութեամբ արդէն փոխադրել են յաջողութեամբ , բայց տակաւին մնում են կապոցների ահագին դէզեր , մինչդեռ դրամական միջոցները անբաւարար են , ասաց սեւաներ մի երիտասարդ :

— Ես նախապէս արդէն շեշտեցի այդ գործի նշանակութիւնը և անյետաձեզելիութիւնը , մանրամասնորէն ծանօթ էի ընկեր Գուրգէնի զեկոցումներից , և մանաւանող նրա յիշատակած վայրերի Հնչակեան կեդրոնական մասնածիւղի ուղարկած մի ընդարձակ տեղեկագրից : Այժմ մեզ ուրիշ բան չի մնում անել , եթէ ոչ՝ անմիջապէս դրամ հասցնել , ներկայումս աւելի քան երբէք հարկաւոր են տարածել մեր արտասահմանեան հրատարակութիւնները , մասնաւորապէս «Խոկրա»ի համարները :

— Ուրեմն խնդիրը այդպէս էլ պիտի կարդադրել , պէտք եղած դրամը ես կըտամ , կարծում եմ որ ժամանակը հասաւ իմ օժիտի էլ գործածութեանը , միջամտեց չէկիկ , կապուտաչեայ մի օրիորդ :

— Շատ լաւ , ընկերունի Սօֆիա , օժիտիդ առաջին գումարը կը յատկացուի դրան , իսկ երկրորդ և խոչոր մասը պիտի տրամադրելի անել Մարուսաի գործին , նրա բժշկութեան ու կարիքներին և առաւելապէս ա'յն հրէշների դէմ , որոնք անլուր , աննման մի ոճիրով թունաւորեցին նրա կեանքը , պատասխանեց խորին դառնութեամբ ընկեր Վահագիցէն :

Մարուսաի անուան յիշատակումը , արտասովոր թափով ցնցեց ներկաներին , շատերի դէմքերը խոժուեցին , մի քանիսի աչքերում արցունքի յիթեր փայլեցին :

— Ի՞նչո՞ւ , ո՞վ էր նա . . . Մարուսան . . .

Մարուսան մէկն էր Ռուսաստանի այն բաղմաթիւ աղջիկներից, որոնք տարւած պարտականութեան գիտակ- ցութեամբ, ահաւոր մարտի դաշտն էին իջել և զոհաբե- րում ամէն ինչ: Եւ մի անգամ, երբ նա կատարում էր իր յօժար կամքով ստանձնած յեղափոխական նշանաւոր մի պարտաւորութիւն, ընկաւ կառավարութեան ճանկը . և մի սարսափելի օր, կառավարականները բռնացան բան- տարկւած հերոսուհու վրայ և նրա կուսական մարմնի մէջ վեներախտի (սիֆիլիս) թոյնը ներարկեցին . . . :

— Ես այսօր մի երկտող ստացայ Մարուսաից, ասաց Բէլկան և ծոցից հանեց սպիտակ լաթի մի փոքրիկ կտոր և ոկտեց կարդալ . «Ըսկերներ, տրիւնիս թանաքով եմ գրում, տանջանքներս ահուելի են, ինձ թոյն հացրէք: Մարուսա» :

— Ըսկերոջ ձեռքով և իւր սեպհամկան արխւնով գրր- ւած այս տողերը, այսօր սարսափելի կերպով ծառացել են ուղեղիս վրայ, իրենց մագիլներով ճգմել են սիրտս . . . այլևս չի կարելի հանդուրդել ու համբերել: Ես եկայ ձեզ մօտ, ըսկերնե՞ր, յայտնելու իմ վերջնական դիտաւորու- թիւնը, է՛լ չեմ կարող քննութիւններին մնալ, չուտով ինձ գործ տւէք, կեանքի այս ընթացքը զգեցի է, պի- տի հետեւիլ Մարուսաին, ոգեւորւած բայց տրտմաձայն կերպով վերջացրեց Բէլկան . . .

— Եթէ այդպէս վարւես, այն ժամանակ, քո տաս- նեակ հազարնոց օժիտի հետ, կը կորցնենք ու կը թա- ղենք նաև մեր շատ կարեւոր և գեղեցիկ ծրագիրները : Որպէսզի այդպէս չլինի, դու պիտի համբերեմ քննու- թիւնների վախճանին, որին շատ կարծ ժամանակամիջոց

մնաց, իսկ մինչեւ այդ մենք սկսենք և վերջացնենք նըշ-
շամատուքի և պսակի գործը, և հօրդ քեզ տալիք դրա-
մօժիտի գլխին «հոգոց հանգուցելոց»ը կարդանք, համոզ-
կիր շեշտերով ասաց Վաչագիձէն :

— Այժմ արդէն մենք յարմար փեսացու էլ ունինք,
շարունակեց նա, ծագումով ազնւական և քեզ նման հա-
րուստի զաւակ : Այս ասելիս նա դարձաւ և մասնացոյց
արեց Գուրգէնը, լաւ հանդիպում է, դուք էլ լաւ զյ-
գեր էք, այնպէս որ ես վստան եմ թէ ծնողներդ վը
պիտի առարկեն կամ մերժեն, երբ Գուրգէնը գայ ձեռքդ
խնդրելու : Այսուհետեւ էլ ո՛չ մի դժուարութիւն չի մնալ
պաշտօնական ձեւակերպութիւնները կտաարելու, բայի
Գուրգէնի օրթօօօքս եկեղեցուն չպատկանիլը, մի ար-
դելք որ պիտի վերացնել, այսինքն պիտի վերամկրտել
Գուրգէնին . . .

Այս խօսքերի ժամանակ՝ ընկերները չկարողանալով
դիմանալ, սկսեցին ծիծաղել :

— Կը ծիծաղէք հապա, էլի՛ հարսանիքի հոտ տ-
ուիք, շարունակեց խօսքը ինքն էլ ժպտալով, տեսնում
էք ինչպէս նախանձախնդիր եմ ուղղափառ եկեղեցուն,
եթէ այս իմանայ հոգեւոր տէրը, ինձ անպատճառ առաջ-
նորդ կը կարգէ և լանջախաչ նշան կը տայ, Հային՝
Ռուս եմ դարձնում, մինչդեռ Գոլիցինը իր բանակնե-
րով չի կարողանում կայսերական կառավարութեան և
«իսկական Ռուսներ»ի այդ ծրագիրը իրագործել :

Ընկերոջ հեղնալի և այլաբանական խօսւածքը այնքան
դիւրական էր և հաճոյալի, որ միւսները մի պահ մոռա-
ցան քիչ առաջւայ թեւատարած թախիծիներկայութիւնը :

— Առանց նախապէս ձեր կամքը առնելու, սիրելի
հարմնացու և փեսայ, ես արդէն վճռեցի, ձեզ կը մնայ
միմիայն՝ առանց առարկութեան, համաձայնիլ. շուտով
պիտի ձեռնարկել գործողութեան։ Քննութիւններից յե-
տոյ ձեզ կը պսակենք և կը ճանապարհենք արտասահման
ուսում չարունակելու, օժիաը կը մնայ մեր տրամադրու-
թեան տակ, որը ձեր մեկնելուց առաջ պիտի մտնի յե-
ղափոխական գանձարանը, իսկ ձեր արտասահմանը. կը
լինի Ռուսաստանի գիւղերը, համալսարանը՝ գիւղացու-
կեանքն ու ցաւը, հասարակական գործչի ամենալաւ և
գործնական ուսուցիչ դպրոցը։

Յեղափոխականների ժողովը նախագծում էր մէկը
այն գործերից, որոնք այնքան յաճախաղէալ էին Ռուս
զարթօնքի շրջանում։ «Կեղծ Պսակներ»ը արդէն սովորա-
կան միջոցներ էին ի սպաս ժողովրդական փրկարար գոր-
ծին ծառայեցնելու այս ուխտին զինորագրւած այն
բաղմաթիւ օրիորդների համար, որոնք այլապէս չէին
կարող բաժինք ստանալ, և նրանք հարկադրւած էին այս
ձեւով պաշտօնական աշխարհի առաջ գալ, օրինականա-
նալ, ապա իրենց բաժին հարստութեան տէր դունա-
լուց, բոլորովին նւիրւիլ սիրած գաղափարի համար յայ-
տարարւած կռւին և բերածը յատկացնել նրան գանձարա-
նին։ Այս անգամ հերթը թէլկախն էր։

— Մարուսաի համար վերջապէս ինձ յաջողւեց
տեսնել բանստապետին, կաշառել նրան և նրա միջոցով բան-
տացին բժիշկին։ Սրանք ամէն հնարաւոր միջոցներ գործ
են դնում նրա առողջութեան համար, բայց ինչպէս
յայտնեց ինձ բժիշկը, նա սարուափելի կիրավով յուսահատ-

ւել է, չի ուզում մարդ արարածի, մանաւանդ այր մարդու երեսը տեսնել, ձայնը լսել: Շատ անդամ փորձել է ինքնասպան լինել, սակայն չի յաջողւել, ամէն հսարաւորութիւններից և միջոցներից զրկել են նրան: Վերջերս աշխատել է սովամտն լինել, կերակուր, ջուր չի ընդունել և մի քանի օրւայ մէջ խաղառ նւազել է, բայց արհեստական կերպավ մնունդ են ներարկել և փրկել մաշից: Ես կարծում եմ. որ պիտի ճար գտնել յուսադրելու նրան, և այս մի միայն Բէլկամն կը յաջողւի:

Խօսողը երկար մազաւոր երիտասարդն էր. նա տակաւին չվերջացրած, ներս մտաւ մի պատահի, սեւ բիւզը հագին, և տւեց մի թուուցիկի սրբագրութիւնը և ապա հեռացաւ:

— Ենկերնե՛ր, այժմ լսեք թուուցիկը, թող Սօֆիան կարդայ, առաջարկեց մէկը:

Օրիորդը վեր առաւ և սկսեց հանդիսաւոր ընթերցումը: Նրա առողջանութիւնը և զգացումով լի շեշտերը աւելի ազդու և տպաւորիչ էին դարձնում գրածքի ուժեղ բովանդակութիւնը: Թուուցիկում ամենավառ գոյներով նկարագրւած էր երկրի բնակիչների ամենախոշոր մեծամասնութեան անհանդուրժելի տանջանքն ու վիճակը, պատմում էր երկրի լաւագոյն զաւակների կրած տառապանքները բանտերում և աքսորավայրերում. ասում էր թէ ինչպէս բանանում են հօրը վրա, որ նա սապոնէ կախաղանի չւանը և իր հարակատ որդու վզին անցկացնէ, ճախարակը ոլորէ և զաւակին խեղդէ, սպանանէ. հայրը՝ որդու դահիճ: Վերջում կոչ էին անում նոր Ռուսաստանին, որ ոտքի ենէ Պառաւ Ռուսաստանի դէմ,

շարժւէ ու թափ տայ անարդ ստրկութեամ դարաւոր
շղթան և գոնէ՛ հնար աւնենայ տեսնելու թէ իրեն կա-
պոլ, կաշկանդող շղթաները ի՞նչ գոյն ունին, ի՞նչպէս և
ի՞նչ մետաղից են շինւած : Թռուցիկը վերջանում էր մար-
տահրաւէր կոչերով և առաջադրում էր պատրաստել
համառուսական գործադուլի համար : Նա գրւած էր
ոռւս, հայ և վրաց լեզուներով և ստորագրւած Ռուս,
Ա. Դէմ. Բանւորական և Հնչակ . Ս. Գ. Կուսակցու-
թիւնների տեղական վարչութիւններից :

Էնթերցումը վերջացաւ, մի պահ ամէնքը լուսւ-
թեամբ իրար նայեցին, Սօֆիան գրպանի ժամացոցին
նալելով առաց :

— Օ՛... մօտ է ժամի տասներկուաը, և մինք վաղ
առաւօտեանից ո՛չինչ չենք կերել, այժմ բաւական է,
վերջ տւէք զբաղումներին, ես սկսեմ թէյի պատրաս-
տութիւնը :

Նա ելաւ և կողքի նկուղից բերից հեշտաեռը, դրեց
սեղանի վրա, թէյը առեց, բաժակները լւաց և կարգով
շարեց, յետոյ կտրտեց սե հացը և բաժանեց : Մինչ այս
մինչ այն, ներկաները շրջապատեցին քրիզր քրիզր եռա-
ցող հեշտաեռը և իւրաքանչիւրը իւր ձեռքով պատրաս-
տեց իր համար թէյ :

Աւ հաց, կծովի՛ թէյ, ճո՛խ ընթրիք ժողովրդական
գործիչների ...



Զմեռ. էր . հիւսիսային երկիրների ամենախիստ , սառ-
նամանալից ձմեռներից մէկը : Զիւնը արշինների հաստու-
թեամբ ծածկել էր միօրինակ հարթութեան անծայր տա-
րածութիւնը : Ամեն բան , բոլոր առարկաները սպիտա-
կաթոյր և թանձր վերմակը վրաները առած , ննջում էին
խաղաղ և անդորր քնով : Կենդանական կեանքը ասես
խապառ դադար էր առել . թագաւորում էր բուքն ու
սառնամանիքը , փոթորիկն ու մրրիկը :

Լայնատարած տափաստանի վրա , այս ու այնտեղ
ընկած էին մարդկային շիներ , մեծ և փոքր աւաններ ,
գիւղեր և քաղաքներ : Երեւմն երբեմն դէպի այս բնու-
կավայրեր տանտղ ճանապարհների վրա երեւում էին
սահնակներ , որոնց մէջ նստած մարդիկ՝ պարուրւած տա-
քուկ մուշտակների մէջ , ձեռներն ու դէմքը ծածկած ,
կծկւել ու կուչ էին եկել . լծկան ձիերը վիչալով վազում
էին սրարշաւ , նրանց արտաշնչած օդը , գոլորշիանալով
բարալիկ և նրբին ամպիկի նման գալարւում էր , պայցա
գալիս , պատրոյգ դառնում և քիչ յետոյ սառոցի վե-
րածւելով , ձիւնի նման վար մաղւում : Լուռ , խաղաղ
դաշտի մէջ հնչում էր սահնակների զանգակների ձայնը ,
որոնք առելի էին զնոպում և քաղցրալուր հնչում : Շէների
մօտակայքում հատ հատ երեւում էին թափառաշրջիկ
որսկաններ իրենց չնիկներով :

Օրւայ վերջինքն էր : Արեւը հարաւային հորիզոնի
բարձրութիւնից կոր գծով իջել և մօտեցել էր իւր ամե-

նօրեայ հանգստավայրին : Երկրի երես ծածկող սպիտակափայլ սաւանը իր վրայ ընդունելով արեգակի վերջին շիկագոյն ճառագայթները, նրանց միախառնեց իւր բիւրաւոր, թափանձիկ աւազահատերի հետ և ստեղծեց երփաներանգ, փողփողուն և անձեռարւեստ մի հիւսւածք, մի գործւածք, նման նորահարսերը սփածանող մետաքսեայ ոսկեարծաթաթել ծաղկէնկարներսվ զարդարուն շղարշներին :

Այս ժամանակ մի շնչի էր մօտենում փոքրիկ մի սահնակ, որին լծւած ձիերը յոզնել էին և հազվու էին քաշում : Միրուքաւոր կառապանը, միրուքն ու ընչայքը զարդարած սառուցեայ սպիտակաւուն կտորանքներով, ձեռները թաթմանների մէջ, մէկով սանձերը ըրունած, միւսովը մտրակ շարժելով մրժմրթում էր ու վարում սահնակը : Հեծեալները երկու երիտասարդներ էին, մինը աղջիկ, միւսը՝ տղայ : Քիչ անցած սահնակը կանգ տռաւ գիւղամիջի մի փոքրիկ հրապարակում, հեծեալները իջան և առաջին հանդիպող շնչականից հարցըին .—

— Շինական եղբայր, բարի՛ աջողում, կարելի՛ է մեզ ցոյց տաս վարժապետի տունը :

— Ուրախութեամբ, պատասխանեց գեղջուկը և առաջնորդեց :

Մի քանի բռպէից յետոյ նրանք կանգ տռան բաց, իր ճիւանների վրա կանգնած մի դրան տռաջ և առանց հարց պատասխանի մտան բակը, ուր նրանց գիմաւորեց տանտիրուհին : Նորեկները բարեւելուց յետոյ աւելացրին «հաց ու աղ», մի խօսք, աբտայայտութիւն, որով Ռուս գիւղացիք մտերմարար իրար են ուղղում, յայտնելու համար միաժամանակ իրենց հիւր լինելը :

Տանտիրուհին փոխադարձաբար պատասխանելուց յետոյ, նրանց համեցէք արեց և առաջնորդեց դէպի սենեկը, ուր նրանք հանեցին հաստ մուշտակները և տեղաւորւեցին կրակի շուրջը :

— Բարով եկաք, Աստծու հիւրեր, ինչպէս էք, հօսառնամանիքը շատ չաճճանդստացրեց ձեզ, հարցրեց տիկինը :

— Շնորհակալ ենք տիկին, ցրտի դէմ պաշտպանւեցինք, պատասխանեց երիտասարդը, բայց սասցէք խնդրեմ ուր է Աղէքսանդրը, արդեօք հօրը կը գայ:

— Ինչպէս երեւում է դուք ամուսնուս ճանաչում էք և մտերիմ էլ էք, նա շուտով կը վերադառնայ, հարեւան տանիցը կանչեցին ինչ որ խնդրագիր գրելու :

Այս ժամանակ ներս մտաւ մէկը, գիւղական և քաղքենի տարազները իր զգեստներով միացրած մի պարոն, նա շտապելով, ափալթափալ վաղ տւեց՝ «Անդրէ ։ ։ ։ սիրելի Անդրէ» աղաղակներով, և ընկաւ նորեկ երիտասարդի ճառվը, նրանք շրթունքները իրար վակցրին և պինդ պինդ պաշպէնելով «պոօշտի» արին, ապա դառնալով օրիորդին սասց —

— Օ՛, շատ ներողոթիւն օրիորդ, Անդրէի ալսպէս անսպասելի գալուստը ինձ շփոթեցրեց, բարով էք եկել, յետոյ աջ ձեռը նրան մեկնելով աւելացրեց. — «Գիւղական վարժապետ Աղէքսանդր :

— Շատ ուրախ եմ, պատասխանեց օրիորդը և հազիւ չնչաց իր անունը, որ և մնաց անկմելի:

— Դէ՛, ասա՛ տեսնենք, սիրելի Անդրէ, ինչպէս ես, է՛դ որ սատանան քեզ այստեղ ուղարկեց: Ֆո՞ւ սատա-

նան տանի , մոռացայ հա՛ : Ելէնա , շո՛ւտ արա թէյ պատ-
րաստիր , է՛ն մեծ հեշտահռովը , կնոջը դառնալով ասաց
Ալէքսանդրը :

—Միամի՛տ կա՛զ , Անիւտան դրանով է զբաղւած ,
քիչ յետոյ պատրաստ կը լինի , պատասխանեց տանտի-
կինը :

—Բայց դու գիտե՞ս Ելէնա . ո՛վքեր են մեր հիւրե-
րը , երեւի չէք ծանօթացել տակաւին :

Ելէնան բացասական կերպով գլուխը շարժեց :

—Անդրէն՝ իմ դասարնկերներից է , թէեւ երկար ժա-
մանակով իրարից բաժանւած , բայց երբէք չմոռացած :
Հա՛ սկզբում , ինչպէս ասացի , անունը Անդրէ էր , իսկ
հիմա , սատանան տանէ , ո՞վ գիտէ ի՞նչ է , ի՞նչ անունով է
վերամկրտւել :

—Այժմ հերթը իմն է , ասաց Անդրէն , թոյլ տուր
որ ներկայացնեմ նախ օրիորդին և ապա նորից ինձ , ո-
րովհետեւ ես էլ է՛ն չեմ , այժմ վերամկրտւած եմ : Ի՞ն-
կերուհուս անունը Բէկա է , պաշտօնով վարժուհի , կո-
չումով յեղափոխական , դաւանանքով Սօցիալ-Դէմօկ-
րատ : Ես՝ ես եմ , բայց քո Անդրէն այժմ Գէորգի է ,
գործով թափառական , շրջիկ քարոզիչ օրիորդի պատ-
կանած կուսակցութեան :

Տնօվարի , մոերմական խօսակցութիւնը այսպէս բա-
ւական ժամանակ շարունակւեց , երբ Անիւտան՝ ընտա-
նիքի տամնը կեցամեայ սիրունիկ աղջիկը , նրանց թէվ
սեղանի շուրջ բազմելու հրաւիրեց :

Հեշտաեռը սեղանի վրայ եռ էր գալիս և երգում ,
ինչպէս ամրան անհոգ և ուրախ բղէզները , եփում էր և

եռման թափը այնքան ուժեղ էր, որ յաճախ խփում ու վեր վեր էր բարձրացնում կափարիչը, ջուրը գոլորշու ամպիկների հետ դուրս փչում: Մեծ բաժակների մէջ ածւած թէլի ոսկեգոյն հեղուկը իր յստակ և պարզ փայլով ծիծաղում էր շրջապատող մարդկանց երեսին և լուսանկարում նրանց՝ իրենց ապակիների հայելու վրայ:

— Ընկերնե՛ր, վերակեց Ալեքսանդրը, հիմա ո՛ւր որ է կը գայ մեր տէրտէրը, իր բարի եկարի աղօթք-պահպանիչը ասելու, ըստ սովորութեան սեթեւեթելու և մասնաւանդ պարգեւ ստանալու համար: Նա վարպետորդի, սատանայից եօթը տարի առաջ ծնած մէկն է, խիստ զդոյշ եղէք և ձեր նուքերի մէջ ժլատ ու վերապահ: Պիտի աշխատել ու ե կասկածելի բան չտալ: Այսպէս, օրիորդ Բէլկան կը ներկայանայ որպէս վարդուհի, խակ դո՛ւ Անդրէ՛, բայց ոչ, մոռացայ, Գէորգի, բնչ պիտի ասես:

— Իմը աւելի հեշտ է, դուք անհանգիստ մի լնիք, եթէ նա սատանայ է, ես էլ նրա պոչն եմ: Գո՛ւ Ալեքսանդր այժմ պատմիր մեզ ձեր գիւղացիների դրութեան մասին, այդ շա՛տ կարեւոր է, ունի կրկնակի և աւագ նշանակութիւն մեզ, երկու նորեկներիս համար: Օրիորդը բոլորովին նոր է և անծանօթ գիւղական կեանքին: Ես վաղ առաւօտեան ևեթ պիտի մեկնիմ, այլ շրջաններ պիտի այցելեմ, կարեւոր յանձնաբարութիւններ ունիմ, այս տեղինը թողնում եմ օրիորդի և քո հոգացողութեանը:

— Վա՛հ, ինչի՞ այդքան չուտ, դո՞նէ՛ մի քանի օր կաց, հանգստացիր և ապա շարունակիր ճամբագ, նկատեց Ալեքսանդրը և սկսեց նկարագրել գիւղն ու իր կացութիւնը: Պատմութեանը երբեմն միջամտում և մասնակցում էր տիկինը:

Նրանք պատմեցին՝ թէ ինչպէս Ռուսաստանի գիւղացիութեան հոգէառ և մշտական մղձաւանջ սարսափ սովը իւր մահափիւռ թեւերը դարձեալ տարածել է լայնատարած հարթութեան վրայ, թէ ինչպէս՝ նա անսարդել կերպով բաւականութիւն է տալիս իր անոկի քմահաճոյքներին, թէ շինականները ահազին խմբերով, երիտասարդ աղջիկներ և տղաներ քաղաքներն են վազում, իրենց ծախում հացի գին ճարելու համար, թէ ի՞նչպէս նրանցից շատերը, դեռ տեղ չհասած, կէս ճանապարհին, զուրկ ցուրտ սառնամնիքից պաշտպանելու ու և միջոցից, սառում ու փէտանալով մահանում են: Թէ ինչպէս կալւածատէրն ու կառավարութիւնը, վաշխառուներն և հոգեւորականները՝ սրբազն դաշնակցութեամբ միացած, կողոպտում են գիւղացուն, խլում նրա փալասի ամենավերջին կտորն անդամ: Թէ՛ ինչպէս ծեծն ու բանտը, տանիջանքն ու Ականքը, աքսորն ու շղթան ծանրացել են գիւղացու վրայ, քամում են նրա կեանքի հիւթը, ծծում նրա արիւնը կաթիլ առ կաթիլ:

Այս ու կնոջ պատմութիւնը այնպէս սրտայով էր և մանաւանդ գրգռիչ, որ ունինդիրները մերթ սրտամաշ հառաջանքներով, մերթ զայրոյթի բուռն կանչերով արձագանդ էին տալիս:

Բէլկան՝ որ մինչեւ վերջ գրէթէ լուսութեամբ լսում ու դիտում էր, և կարծես ապրում իրական կեանքներ կայացնող մի սարսափելի երազ տեսարան, և ի տես նրան ամբողջութեամբ մտածմունք դարձած գալարուում էր յուղմունքից, ասաց.

— Անախրտ, անհոգի տէրերն ու ակրապետողները,

իրենց դասակարգալին շահերի ծնունդ՝ կրօնի հանդերձ-
եալ կեանքին վերապահած դժոխքը, ներկայումս, իր ամ-
բողջական և է՛լ աւելի կատարելագործած գեհենային
դժնդակ սարսավճներով փոխադրել են այս աշխարհը:
Բաւական չեն համարել երկրայինը, երկնայինն էլ օդնու-
թեան բերելով լրացրել են :

Եւ դժբաղդ Ծուսաստանը այդ դժոխքի ամենավաս-
անկիւնն է + այստեղ է սոսկումի, գեհենի Աստւածը. նա
շատ է պառաւել . . . և մենք եկել ենք նրա պատանքը
հիւսելու . . . :

¶.

Սառնամանեաց թագաւորութեան հայրենիքում մի կատաղի ձմեռ իր բոլոր արհաւերքներով, սովոր, անդոր-ծութիւնը իրենց ահաւոր և դժմեմ ուրւականներով ի-րար համերաշխած, անկեղծ կերպով ձեռք ձեռքի տւած, սրարշաւ չափչփում էին անծայրածիր տարածութիւնը՝ ապարագը Ռուսաստանի տափարակի վրայ իրենց նախ-ճիրները ափակով : Եւ նրանց երկրակործան արշաւին ո՞չ մի արգելք, ո՞չ մի խոչընդուռ չկար ասես, ինչպէս չկար և մի բլուր, բնական մի բարձրութիւն, որ հարթ մակե-րեւոյթի միօրինակութիւնը խանդարել յանդգնէր, իր հա-մարձակ ներկայութեամբ : Ամենուրեք աչքի էր ընկնում տափակութիւն և միայն տափակութիւն . . . :

Սով էր, Ռուսաստանի մեծ սովերից : Հսկայական երկրի միլիօնաւոր շինական ազգաքնակութիւնը հոգե-ւարքային ճիչերով միջում էր վիթխարի, հաղար գըլ-լսանի հրէշի սուր ժանիքների ճնշումների տակ, ժանիք-ներ՝ որոնք երթ սրածայր ժայռեր ցցւել էին նրա ամե-նակուլ երախում :

Ոչի՞նչ, բառի բովանդակ նշանակութեամբ ոչի՞նչ չու-նէր թշւառ գիւղացին :

Մինչեւ կալոցի ժամանակ, նա անցեալ տարւանից արդէն ծախել կամ գրաւ էր գրել իր բաժին բերքի մի մասը, և փոխարէնը վաշխառուից, կալւածտէրից դրամ էր առել իր սուր կարիքները հոգալու համար : Եւ կա-լցի օրերին, երբ նա ծեծել ու պատրաստել էր ցորնի շեղ-ջը ու չուշ ցորենը կուտակել, եկան յաւիտենական պա-հանջատէրերը :

կալւածատէրը տարաւ բերքի ուղիղ կէսը :

Վաշխառուն վերցրեց մէկ տւածի փոխարէն հինգ ,
մուրհակը իւր տոկոսներով բարդեց , վերանորոգեց ու
գնաց :

Եկաւ հոգեւոր տէրը , Աստծու պաշտօնեան , երկնի
և երկրի միջնորդը , բռնեց մեծ չափ մաղը և տարաւ
տասից մէկ բաժին , վանքերի և եկեղեցիների կալէմաղը :

Եկան և շրջիկ մուրացկանները , Երուսաղէմի և այլ
սուրբ տեղերի առաքեալ խաչագողները , առին , գնացին
իրենց համելիքները :

Ի՞նչ մնաց շեղակոյա շուշ ցորենից ...

Շատ քիչ , կամ աւելի ճիշտ՝ ոչի՞նչ ...

Եւ վերջապէս բարեհածեցին չնորհ բերել կառավաշ
րական հարկանաւաքները ու յափշտակեցին մնացեալը :
Եղածը քիչ էր , չբաւականացաւ , չգոցեց պարտքը . տէ-
րութեան պահանջները շատ էին , յետնեալ տուրքեր էլ
կային , պատերազմ էր արւած , արտակարգ և նոր հար-
կեր կային բարդւած , պէտք էր բոլորն էլ վճարէին ...
և վաճառեցին ինչ որ ունէին ...

Երբ ձմեռն եկաւ ձիւն ու փոթորիկներով , և երկրի
երեսը բանեց սառոցցէ թամնձր ծածկոցներով , եկաւ և սո-
վը գիւղացու գլխին , շինականի դրանը չոքեց ... Սոս-
կաց նա , ի՞նչ անէր , ճար ճարակ չկար , պատապարանք
չկար ...

Թունաւոր մի իժ օձ , մտած Ռուսաստանի սրափ մէջ ,
սողում էր նրա երակներում , գալարւում էր , կծկւում
ու խայթում նրան , անտանելի կակիծ միմուռնե-
րով տանջում աներեւակայիլի ցաւերով հոգեվարք պատ-
րաստում :

Ցուրտ էր տարին, սովէ էր տարին . . . :

Մերկ էր գիւղացին, քաղցած էր աշխատաւորը . . . :

Մէծ, Աշխատաւոր Ռուսաստանը մեռնում էր. Նրան
սպանում էին :

Փոքր, Շահագործող Ռուսաստանը հրձւում էր,
չւայտութեան մէջ յզփանում :

Առաջինները դիմում էին իրենց գարերով պաշտած
Աստծոն, մոմ վառում սուրբերի պատկերների առջև,
որոնք լուռ էին, համբ, կոյցր . . .

Երկրորդները հիւրասիրում էին Աստծոն ու սուր-
բերին իրենց չքեղ պալատներում, ատաքուկ դահլիճ-
ներում, ճոխ սեղանների շուրջը և նրանց արբեցնում
առաջինների արցունքներից պատրաստած օղիով,
նրանց արիւնից շինած գինիով . . .

Գիւղացու սովը այնքան սուր էր, գիւղի ցուրտը
այնքան սաստիկ, որ կարող էին Աստծոն անդամ
սովամահ անել, ցրտատար սպաննել :

Այս կեանքը ապրեց և Բէկան, ականատես եղաւ
բոլորին : Նա իր կաշու վրայ զգաց ցուրտի մինչեւ ու-
կորների ուղին ու ծուծը ազգող ալաքների սուր ծակոց-
ները, անօթութեան հսմը սուեց, ականջալուր եղաւ մոր-
մոք լացերին, աչքերից հաղիւ դուրս եկած և թերթե-
ւունքների վրայ տառած արտասուքների կաթինները
տեսաւ, տեսաւ քաղցից նւազած, մօր կրծքին կպած,
չորցած ցամքած ծծերի պատկները տառաններով կրծոսող
երեխաններին, տեսաւ և նրանց յուստահատ թպրտալը,
մըմնիջովը :

Թունդ եղաւ նրա ազնիւ զգացումների պահա-

ըան սիրով, զարգացաւ պարտականութեան գաղափարը, և անհնամն ինքնամուացութեամբ, մի չքնար անձնուիրութեամբ նա հրապարակ եւաւ :

Մէկ տարի էր ինչ որ նա դիւդ էր եկել, և արդէն ծանօթ էր բոլոր բնակիչներին : Նա հասնում էր ամեն տեղ, ուր որ իրեն կանչում էին, ուր որ ինքը կարող էր ու է կերպով օգտակար լինել :

Փափկասուն օրիորդը, ոչ միայն հանդուրժեց ոչ մարմնական տանջանքներին, այլ և տոկաց, տարածեն անսովոր մարմնական նեղութիւնները, զրկանքները, քաղցն ու ցուրտը : Այս բոլոր ներքին և արտաքին հարւածների և աներեւակայելի պայմանների դէմ, նա ունէր աննիւթ, աննկուն մի վահան՝ գաղափարը, որով քաջօրէն պաշտպանում էր : Այդ գաղափարը նրան մի դիւցազնուհի դարձրեց, իսկ դիւցազնուհին՝ ոգեւորւած և նրան իր մէջ մարմնացրած, նրա հմայքը, վեհութիւնը տարածեց :

Բէկան ժողովրդի պաշտելին էր, նրա վրկութեան փարոսը, իդձերի պատկը :

Նախապաշտեալ և մնոտիսապաշտ զգացումներից առաջնորդւած ցարի պատկերի առաջ խոնարհւող և խաչակինքող դիւդացին, վարձատրութիւն ստանալու և գործած մեղքերի քաւութեան համար զանազան սուրբերի առաջ մում վառող, մատադների սեղան սարքադ շինականը, կալւածատէրերի և բոլոր «մեծեր»ի առաջ հլուճազանդ աշխատաւորը, վիզք ձուկ, ձեռքը սրտին կցած շինականները այժմ արդէն բոլորովին փոխւել էին :

Առանց յոդնութեան, առանց արտունջի և գանգա-

տի, ամենքի ցաւը հաւաքած, ամենքի վիշտը իր շալակն առած, շրջում էր Բէլկան գիշեր ու ցերեկ, անէ տուն, փողոցէ փողոց։ Եւ ի՞նչ էր տեսնում։

Նա տեսնում էր գիւղացու բնակարանը՝ քառակուսի մի ծածկ, չորս կողմից մի ծայրը գևանի մէջ ամրացրած, միւսը վերեւից իրար հետ կապած մի քանի գերաններ, նրանց բացերը հիւսած կաղնի ճիւղերով և ազասեւ ցեխով ծեփած, առաստաղը դարձեալ ճիւղերով կոնածեւ գործւած, և ահա՛ գիւղացու տունը, նրա կառուցածքը, որը տատանւում էր ուժեղ քամիների առաջ, ընդունում էր ցուրտ հովերը, անցքեր ու ծակոտիններ բացած ներս էր հրաւիրում մաղւող ճիւնի, թափւող անձրեւի կաթիլները։ Այս ծածկի տակ, այս փոքր և միակտուր շրջափակում, տեղաւորւում էր գիւղացու կայքը, ընտանիքը, անաստնները և վերջապէս ամեն բան։ Տան մի անկիւնում, գեանի երեսին բարձրանում էր բաւականին մեծ և քառանկիւնի մի սաքու, ներքեւի մասում, յատակին հաւասար հնոցով. սա գիւղացու վառարանն էր (փէչ)։ Վաւարտնի վերի մասը՝ հարթ մակերեւոյթ ծածկը, ընտանիքի մշտական բնակալայրն էր, միակ տեղը, որ նրան պատսպարում էր սառնամնիքից, մեղմում էր ցրախ սաստկութիւնը։ Տան միւս անկիւնում, մսուբների առաջ կապում էին անաստնները, տէրերի հետ միասին, միեւնոյն ծածքի տակ և մինչեւ անգամ աւելի լայն տեղում։

Եինական համախմբում կար. ծեր ու մանուկ, կին ու այր, ամենքը հաւաքւել էին։ Մի այնպիսի զօրաւոր և անվանելի թշնամի էր սպառնում նրանց, որ ստիպւած

էին հաւաքական աշխատութեան, խորհրդակցութեան
դիմել:

Այստեղ էր և Բէլկան, նա երկար ժամանակ և համ-
բերութեամբ լսեց գիւղացիների ասածները, առաջարկ-
ները և փիլիսոփայութիւնները, ապա վերջում ինքը
սկսեց ոգեւորիչ և համոզով ձայնով խօսիլ:

— Ի՞նչպէս բնութեան մէջ չկայ ո՛չ մի երեւոյթ, ո՛չ
մի առարկայ, որ իր ծագման և գոյութեան պատճառ-
ները չունենայ, այնպէս էլ մարդկային կեանքի և ապրող
իրականութեան մէջ առաջ եկած իւրաքանչիւր դէպ-
քը, իրողութիւնը ունի իր պատճառները, ծնողը, գոյու-
թեան պայմանները երաշխաւորող գործօնները, աղդակ-
ները: Այսպէս, սովը այսօր դառն ու սարսափելի դրու-
թեան տէրն է, նա անարդել հնձում է մարդկային կեան-
քի կանաչ և ոսկի հասկերը: Նա աւարի և կողոպուտի
առարկայ է դարձնում մեր կեանքերը և յաղթանակ տա-
րած՝ սլանում է մեր դաշտերի վրայով և դիւային քըր-
քիներ արձակում: Բայց ի՞նչո՞ւ այսպէս, ո՞վ է, ի՞նչն
քիներ դժոխքի ծնողը, ո՞րն է խսկական պատճառը: Ա-
սում են՝ սա Աստւածային պատիմ է, բնութիւնից ու-
ղարկւած պատուհաս, անքերիութեան, երաշտի և կամ
կարկուտի հետեւանք է: Ո՛չ, բարեկամներս, ո՛չ, այս
սխալ հասկացողութիւն է կորստարեր և չարամիտ սխալ,
վարպետ մի յերիւրանք նրանց կողմից, որոնք խսկական
հեղինակներն են սովի և քաղցածութեան... ահա՛ թէ
ի՞նչո՞ւ և ի՞նչպէս:

Ասում են՝ «Աստւածային պատիմ է»: Բայց սա՛ ի՞նչ
առեղծւած է. նայեցէ՛ք ձեր շուրջը, մտքով սլացէ՛ք

տարիներով յետ, մէկը միւսի ետեւց յիշեցէք այն պարբերական սովերը, կանոնաւոր կերպով իրար յաջորդող, և միշտ միմիայն ձեր դուռը, ձեր վզին նատող սովերը . . . Ի՞նչո՞ւ այդ Աստւածը միայն մեղ է պատժում: Տեսա՞ք մի օր, մի ժամանակ, որ նա հարուստին և կալւածատիրոջն էլ սովամահ աներ: Աստւածային պատիժ են ասում, որպէս զի ձեզ խարեն, լուցնեն, և այդ դժբաղդաբար մինչեւ այսօր աջողւելէ իրենց . . . Եւ միթէ կարելի՞ է հաւատալ դրան. Աստւած մարդասպա՞ն . . . Աստւած ոճրագո՞րծ . . .

Ի՞նչ բաներ են բնութեան պատուհանները՝ անրերիութիւն, երաշտ, կարկուտ են, են . . .: Ո՞վ մտածեց անրերիութեան դէմ մաքառել, ո՞վ մտածեց մեր դաշտերն ու արտերը պարարտեցնելու և մշակելու համար: Ո՞վ այսատեց հիմնել հասարակական-ինսյողական շտեմարաններ, որտեղերում տարի բերքի մի մասը պահէին սեւ օրերի համար: Ո՞վ հաղորդակցութեան միջոցներ ստեղծեց և մեղ տանելի ու մատչելի դարձրեց, որպէս զի ի հարկին այլ վայրերից կարողանայինք պէտք եղածը հեշտութեամբ փոխադրել:

Երկնային պատուհաս են համարում երաշտը, մինչդեռ ոչ ոք չի ձեռնարկում, չի խորհում մեծ-մեծ գետերից ջրանցքներ բերել և մեր ընդարձակ դաշտերը ուռոգել, արհեստական աղբիւրներով անջրդի հողերը մըշակել: Ո՞վ բերեց մեղ գիտութեան հնարած կարկատագել և ամպացիր մեքենաները . . . պատախանը պարզ է, ոչ ոք: Եւ ո՞չ միայն չեն բերում, չեն մտածում այս բոլորի մասին, այլ ընդհակառակը, խանգարում են մեղ, արգիլում են այսպէս ձեռնարկողներին . . .:

Այս բոլորը այսպէս լինելուց յետոյ, այժմ ասէ՞ք՝
ձեզանից ո՞վ հող ունի, և եթէ քիչւորներ ունին մի մի
կտոր, գրանք արդեօք ի՞նչ սարսափելի պայմանների
ներքոյ են: Գիւղացիութեան ամենախոշոր տոկոսը, բառի
բովանդակ նշանակութեամբ, հող չունի, հողագուրկ է,
իսկ նրա փոքրամասնութիւնը ունի այնքան, որքանը
ընդունակ է միայն մարդուս շարունակ չարչարելու, բայց
ոչ կերակրելու:

Ինչո՞ւ է այսպէս . . . որովհետեւ հողը պատկանում
է նրանց, սեփականութիւն է փոքրաթիւ մարդկանց,
որո՞նք չեն աշխատում, այլ շահագործում են, որո՞նք
չեն արդիւնարերում, այլ հարստահարում և վայելում
են . . .

Այս օրը, երբ ամեն բանի հետ կը դադարի և հողի
մասնաւոր սեփականացումը, երբ նա էլ կը դառնայ
հասարակական, միայն այն օրը կըվերանան ներկայի
բոլոր անարդարութիւնները, զբանքները և թշւառու-
թիւնները, մնացեալները, սրանից դուրս եղածները մի-
միայն կիսամիջոցներ են, կարկատաններ են և աւելի
ոչինչ :

Բայց սովը անքերիտութեան և բնութեան պատու-
համների հետեւանք, արդիւնք չէ, ինչպէս չէ այս տար-
ւանը:

Չեզ յայնի է, որ ո՞չ երաշտ, ո՞չ կարկուտ, և ո՞չ
մի այլ երկնացին դժւարավանելի կամ թէկուզ անվանե-
լի պատճառ չկար, բայց եկառ սովը, ուժեղ և սաստիկ
թափով . ուրեմն ինչո՞ւ:

— Որովհետեւ տիրապետողները այդպէս կամեցան,

սրովհետև այդպէս էր պահանջում նրանց շահը : Եւ նը-
րանք գործադրեցին իրենց արամադրելի բոլոր միջոցնե-
րը . հարկանաւաքները , հոգեւորականները , կալւածատէ-
րերը և սրանց երկրորդականն բոլոր գործիքները միահա-
մուռ ուժերով հրապարակ իջան ու տարան ամեն բան , և
ուտեղիքի պաշարը , և ազրուստի այլ միջոցները :

Զեր աշխատած , արդիւնաբերած բարիքները , այսօր
ծախում են այլոց , վաճառում են և ձեզ անսակելի զնե-
րով , մի արժէք որ դուք չունիք և չէք կարող ունենալ:
Եւ այս արհեստական սով է , նիւթւած տէրերի
ձեռքով :

Մե՛նք անօթի , նրանք կուշտ . մեր աներում մի հո-
ափկ ցորեն , վարսակ չկայ , նրանց ամբարները լիքն են
բերնէ բերան և մարդկանց փոխարէն ոճիներն են կերակ-
րւում դրանցով :

Ի՞նչ անել այժմ , ի՞նչ է մնում մեզ : —

—Կազմակերպւել , մեր շահերի , —որը և է համա-
մարդկային — գիտակցութիւն ձեռք բերել , ձեռք տալ
քաղաքացի մեր բազդակիցներին և կուելով այս կարգերի
դէմ՝ վերջ դնել մասնաւոր սեփականութեան և նրանից
ուղղակի և անուղղակի բղիսող բոլոր չարիքներին , դժւա-
րութիւններին և անհաւասարութեանց :

—Բաց մինչեւ այդ , մինչեւ այդ օրւան ժամանումը ,
մինք սովամահ կը կոտորւիմք . մենք քաղցած ենք , մեզ
հայ ... կերակուր ... մնունդ տւէք , գոռաց ունկնդիր
բազմութիւնը ...

Բարձրացող աղմուկի մէջ անլսելի դարձան օրիորդի
վերջին խօսքերը , իսկ ցրւել սկսող գիւղացիները մէկը
միւսին հարցնում էին .

—Հաց կայ , ցորեն շատ , սովը արհեստական է և
սարքւած միների ձեռքով , տէրերի կամքով ... ի՞նչ անել :

¶.

Հիւսիւային երկիրներին յատուկ երկարատեւ, չնչառ-
պառ ձմեռը զնալով սաստկանում էր և վերջանալու
յոյս չկար ասես, մինչդեռ սովը իր սուր ճանկերը խրում
էր գիւղացու մինչեւ սրտի խորքը և այնտեղից դուրս
բերում ճանկերը՝ արիւնաներկ, կհնսատու հեղուկի կա-
թիլները եղունգների ծայրերից թափթփում երկրի ձիւ-
նաթոյր երեսի վրայ:

Մի քանի օր էր որ իվանի ընտանիքի գրեթէ բոլոր
անդամները ոչինչ չեն կերել, մեծ ու փոքր միասին մնա-
ցել էն անսնունդ, անստաղ, գետնախմնձորի վերջին հա-
տըն էլ սպառւած էր:

Իվան և իր ամուսին Մանեան նայելով իրենց ան-
ստաղ փոքրիկների դալուկ երեմներին, լսելով նրանց
«հայրիկ անօթի եմ», «մայրիկ քաղցից մեռնում եմ»
հոգեխորով խօսքերը, նրանք կորցրել էին ուժեղ, ան-
տանելի տանջանքների տակ և իրենց բանականութիւնը,
շւարել և խենթացել էին չգիտէին ի՞նչ անելնին: Է՛լ մի-
ջոց չեր մնացել, դուռ չեր մնացել, որ չեին բաղեկել,
բայց դուր, անօգուտա...»

— Մա՛մա, հայ... մի կտոր գետնախմնձոր...»

Այս տիսուր, կերկերաձայն յանկերգը, որ ընդունակ
էր ապառաժի կարծր կուրծքի մէջ թափանցելու, լսում
էր յաճախառիկ իվանի աղքատիկ յարկի տակ:

— Իվա՞ն, մի անգամ ասաց նրան ամուսինը, էլ
հասր չկայ, ե՛կ տէրտէրին գնա, դուցէ նա յանձն առնէ

քեզ հետ գալ և միջնորդել մեծ պարոնի մօս, որ պարտք տայ, թէկուզ ի՞նչ դնով էլ որ լինի:

—Ի գուր կը լինի Մանեա, բողոքովին անօդուտ, մեր տէրտէրը էն բարեհոգի ծաղիկներից չէ, նա վարձկան է և այն էլ շատ կեղտու տեսակի: Ես երէկ էլ գնացի նրա մօս, նկարագրեցի վիճակս, աղաչեցի և խընդրեցի իրեն, նա անսիրտ կերպով զայրացաւ վրաս և տսաց. — «Գնացէք ձեր տեղն է, դեռ այս քիչ է, մեր Աստւածը տակաւին խնայում է, դուք, առորդ Ռուսաստանը պղծող, աստւածախաչ Հրէաների, հերձւածող Լուտիչների, կաթոլիկ Լեհների, բողոքական Ֆինների, ոչ ուղղափառ Հոգերի ևն ի հետ միացած էք ընդդէմ նրան, նրա աստւածահաստատ սուրբ միապետի և ուղղափառ հւկեղեցու, գնացէք թող նրանք կերակրեն ձեզ: Եւ նու լիաբերան մի հայնոյանքով թեւիցս բռնեց և տան դուռը ցոյց տւեց...

—Գնա՛ ուղղակի մեծ պարոնի մօս, թերեւս նա դթայ, տսաց կինը:

Մի քանի փոքրիկներ, որմնք անկանոն կերպով պառկած, իրար վրա էին թափւել, հաղիւ էին շարժւում, երւրեմն երբեմն աչքերը թարթելով, կեանքի վերջին վայրկեանները ընդառաջող մահամերձների նման, արդէն ուժասպառ, հոգեւարքային հիւանդների պէս, ինչոր եղերերդ էին մրմնջում: Այս մրմունջները գալիս, նրանց չորցած կոկորդների մէջ խեղղւում ջարդուկոտոր լինելով մարում էին, որով միայն նրանց բեկբեկումի շուկն էր լսելի լինում: Զայնատար թելերի անզօրութիւնից առաջացած ընթացքի խզումը էր նչում, նրանք էլ ան-

կարող էին կրել իրենց մշական բեռը, առնել թոքերից
մինչ բերան երկարող ճամբան, և դեռ տեղը չհասած,
կէս շաւիղի վրա, ճնշում էին բեռան ծանրութեան տակ
ու ընկնում...

— Մայրիկ հաց... հաց...

Իվանը դուրս եկաւ տնից և անգիտակցաբար քայ-
լեց դէպի մեծ պարզնի բնակավայրը, որը գիւղական տնե-
րից բաւական հեռու ընկած, մի ընդարձակ և հիսմալի
շինութիւն էր: Երան մի կերպ, հազար ու մի դժւա-
րութեամբ, հաղիւ յաջողւեց ներկայանալ մեծ պարզնին:

— Տէ՛ր, ասաց Իվանը, գթա՛, խղճա՛ մեզ, չորս
հինգ օր է ոչինչ չենք կրել, զաւակներս մահւան
դուռն են հասել..., պարտք տո՛ւր, հոգու պարտք, քո
ստրուկը, քո դերին կը դասնամ մինչև կեանքիս վերջը,
հա՛ց տուր մեզ, հա՛ց տուր, մէկի փոխարէն տառը կը
վերադարձնեմ տռաջիկայ կալոցին:

— Ես ի՞նչ անեմ, հօ՛ ես պարտաւոր չեմ... միայն
քեզ մի բարութիւն կարող եմ անել, եթէ ունիս կանո-
նաւոր գրաւական բե՛ր մի բան կը տամ, էլի՛ քրիստո-
նեայ եղբայրներ ենք:

— Զկայ, ոչինչ չմնաց, ամեն բան, ինչ որ ունեի
վաճառքի հանեցին յետնեալ տուրքերի փոխարէն, մնա-
ցածն էլ մինչև այսօր ծախծինով կերանք, այժմ ոչինչ,
ոչինչ չունինք:

— Եթէ այդպէս է, տալ չեմ կարող, և ո՞ր մէկիդ
տամ, գնացէք հող ու քար կերէք, ինձ ի՞նչ...:

Յուսակուոր և գլխահակ վերադարձաւ Իվանը, և
չգիտէր ինչպէս տուն գնար, ի՞նչ պատասխանէր հաց տ-

զաղակող իւր դաւակներին : Այս մտորումներով՝ ինքիրան
մոռացած , նա իրեն գտաւ գիւղական հրապարակում : Աւ
հազին բազմութեամբ շրջապատւած , քաղցած ամբոխը
վայրենի աղաղակներով որոտում էր , եկեղեցու զանա-
գակները անդուդար և արագութեամբ հարում էին :
Իվանը առանց ուշադրութիւն դարձնել կարենալու , շա-
րունակեց ճամբան և տուն հասաւ :

Փոքրիկները դարձեալ իրար վրայ թափւած , ան-
շարժ , մարած աչքերով նայում էին : Նրանց բերաններից
դեղնաւուն մի հեղուկ կտմաց կտմաց ծորում էր , քաղ-
ցանուը անախորժ էր դարձել տան օդը : Մայրը գրկած
էր նրանցից մէկին և առանց լաց լինելու արտասաւում
էր , ասես մարմարիս արձան լինէր և աչքերից կախ ըն-
կած արցունքները՝ ալմաստի հատիկներ : Մանեան զա-
ւակը գրկում , լացակում հայեացքով նայեց ամուսնուն ,
տեսաւ նրան ձեռնունայն , կործանւած յուսով և ապա
սուր մի ճիչ արձակելով՝ ասաց , —

— Իվան , Վանեան մեռա՛ւ . . . մեռա՛ւ հաց . . .
քաղցած եմ . . . հայրիկ . և հոգեհան վերջին խօսքերը չու-
րացան նրա սպիտակ շրթունքների վրայ . . .

Իվանը մօտեցաւ , անտղեց դիակնացած որդուն ,
ապա ծունկի իջաւ , վերցրեց նրա պաղած թաթիկը , հպեց
շրթունքներին , մի քանի բոսէ անձայն , անմըմունջ
մնաց այդպէս , յետոյ ոտքի ելաւ սրբազն լուսութեամբ
և խորհրդաւորութեամբ . . . Մանկահասակ սովամահի յա-
ւիտենական նինջը ու է կերպով խանգարել , կամ վրդո-
վել շէին ուղում որդեսէր ծնողները :

Հայրը սկսեց դատարկւած խրճիթի այս ու այն կողմը

սլրապտել : Գտաւ կարկատած մի ջւալ և մի տապար ,
վերջինս տեղաւորեց տոպրակում , դրեց ունթի տակին և
դուրս գնաց :

Բաղմութիւնը դարձեալ մնում էր միեւնոյն տեղում :
Մի հողակոյտի բարձրութեան վրա կանգնած երիտասարդ
մէկը ոգեւորւած կերպով խօսում էր , նրա իւրաքանչ
չիւր մի պարբերութեան , մէն մի կոչին պատասխանում
էին համաձայնութիւն , աղաղակներով :

— «Ե՞նչ լոել ես ու հանգիստ նստել , դո՛ւ աշխար-
հաշէն շնսական , դո՛ւ մնծ համր , ասում էր երիտասար-
դը , միթէ բաւական չեղաւ , միթէ յաւիտենական պիտի
դարձնես քո ստրկութիւնը : Ոտքի՛ ելէք , շարժեցէ՛ք ձեր
բազուկները աշխատաւոր գիւղացիներ : Զարթի՛ր դու
խորունկ քնիցդ երկրի աղն ու ծուծ , զարթիր , Ուուսաս-
տանի քնած աստւած գործաւոր , տէր դարձիր աշխա-
տանքիդ , քո քրտինքով ուոզւած հողը խլիր յափշտա-
կողների ձեռքից , արեանդ մնունդով ուոճացած հացահա-
տիկները վերադարձրու քեզ . . .

Հեռետորը շարունակում էր իր ճառը տալով նրան
պատմական , անտեսագիտական և մանաւանդ գիտական
ընաւորութիւն : Նա պատմում էր՝ թէ ի՞նչպէս եղել է մի
ժամանակ , երբ հողը և արդիւնաբերութեան բոլոր միջոց-
ները պատկանելիս են եղել հասարակութեան , երբ գու-
յութիւն չի ունեցել մասնաւոր սեպհականութեան դրու-
թիւնը , բայց յետոյ աւելի ուժեղները , բանաւորները
յափշտակել ու խլել են բոլորը և դարձրել դոյք իրենց
անհատի , որ այդ յափշտակիչ փոքրամասնութիւնը մին-
չև անգամ սեփականացրել է և մարդ արարածներին
իբրև արդիւնաբերող գործիքներ :

Կենդանի փաստերով և կարկառուն օրինակներով նա հաստատում էր՝ թէ ի՞նչպէս այլեւս գոյութիւն չի կարող ունենալ և չպիտի ունենայ հողի էլ մասնաւոր սեպհաւ կանութիւնը, որ այդ ձեւը ամենալաւ միջոցն է շահագործողների ձեռքին շարունակելու զրկումի, յափշտակութեան և հարատահարութեան գործը, որ չնորհիւ այս համգամանքի, իրենց ձեռքը կեղբոնացած խոչոր դըրամագլխի, կառավարական օրէնքի դրած ամենատեսակ հարկերի և սեղմումների, նրանք արագութեամբ ոչնչացնում են և մանր սեփհականատիրութիւնը և հողը կեղբոնացնում, որով և հիմք դնում, սաղմնաւորում տպագոյ հասարակութեան ընկերական կարգերին:

Նա ասաց՝ թէ ինչպէս պիտի կազմակերպել լինքնապաշտպանութեան կռւի համար տրամադրելի բոլոր ազնիւ միջոցներով, յետ ստանալ տրդիւնաբերութեան բոլոր միջոցները՝ հողը, գործարանները, դրամագլուխները ևն. ևն., և այդ բոլորը վերադարձնել տէրերին, հասարակութեան, իրականացնելու համար աշխատանքի, հաւասար աշխատանքի թագաւորութիւնը, որը դրախտ կը դարձնէ երկիրը և կերջանկացնէ ողջ մարդկութիւնը . . . :

— Շինական եղբայրնե՛ր, դիտակից և աղնիւ աշխատաւորներ, Ռուսաստանի ծանր բեռքը ձեր ուսերին էք կրում, նրա լինել չլինելը ձեզնից է կախւած, նրա բազդը դուք պիտի վճռէք, ցնցւեցէ՛ք մի անգամ, ուժգին ահաւոր մի ցունցով, շարժեցէք ձեզ կաչկանգող շղթաները և նրանց ձայնից անգամ կը սարսի բանակալութիւնը, շահագործողների վոհմակը, որ ամեն տարի սովը չկանգնի ձեր դրան առաջ, և նրա սև ուրւականը չթափառէ մեր երկրի վրա:

իվանն էլ մինչեւ վերջ համբերութեամբ լսեց, և երբ
ձառախօսը՝ լոեց, նու բարձրացաւ հողակոյտի վրա և
գոռաց կատաղի կերպով.

— Զաւակներս քաղցից ընկան անսւաղ, թալրասցին,
այնքան տղաղակեցին, բայց ոչի՞նչ, ի զո՞ւր . . . մէկը քիչ
առաջ մեռաւ, միւաները ճամբաս են ընկնում նրան հաս-
նելու . . . Դարձեալ գնացի մեծ պարոնին, մերժեց ինձ,
արտաքսեց տնից, այժմ էլի պիտի գնամ, եկէք միա-
սին գնամք . այն ժամանակ դրաւական չունէի տալիք
մեծ պարոնին, իսկ այժմ գտայ և տանում եմ . . .

Վերջին խօսքերը տաելիսնա հանեց տապարը, բարձ-
րացրեց և շարունակեց : —

— Ահա՛, թանկագին դրաւականը՝ խօսուն և ուժեղ
մի մուրհակ, որ պիտի թողնեմ մեծ պարոնին, նրա ինձ
տալիք ցորենի փոխարէն . . . դէ՛, այժմ ժամանակն է, ո՞վ
չի ուղում իրեն և հարազատներին սովամահ անել, թո՛ղ
հետեւի ինձ . . .

Մի քանի բոպէից յետոյ ամբոխը զինւած բահերով ու
բրիներով, տապարներով ու մահակներով հետեւում էր
իվանին, բարձրածայն երգելով —

Երթա՛նք, ախապէրնե՛ր՝ բանւոր շինականք,

Երթա՛նք քանդելու դաժան ապարանք,

Ուր ստրկութեան շղթան են կոռում

Եւ մեր գերութեան պատանն են հիւսում:

Երթա՛նք, գիւղացիք, կործանե՛նք կուռքեր

կանգնած մեր ձեռքով՝ դժխեմ հրէշներ,

Երթանք աէր դառնանք մեր աշխատանքին,

Որ ամբարւած է մառան պարոնին :

Անվերջ զրկանքին սովու էլ միացաւ,
Զիւն, սաստիկ ձմեռն օգնութեան հասաւ,
Ելէ՛ք կուելու դէմ դաժան սովի—
Վայրագ հեղինակ մեր ոտիմների . . .

Երգի կորովի հնչիւնները աւրածւում էին օդի շերտերում և հոգատար, սիրայօժար աշխատանքով իրար էին տալիս, իրար հաղորդում ձայնի աներեւոյթ մասնիկները, մինչեւ որ տարան հասցրին մեծ պարոնի ականացին և այնուեղ ձայնեցին աւելի ուժեղ կերպով :

Երգի որտաքնդոստ հնչիւնները գերթ կատաղի առիւծաների հոնդիւններ, լցնում էին օդը և կլանում ուրիշ ամեն ձայն : Քաղցած մարդն էր զայրացել, և գնում էր յագենալու, գնում էր կշտացնելու իր ստամոքսը :

Սովատանջ մարդկանց զրոհը, փոթորկատար և ամպրոպածին հողմի նման, շարժում, առաջ էր քշում շարքերը :

Մարդ անօթիների բազմութիւնը ծփում էր, լավին էր տալիս ինչպէս փոթորկայոյզ և խռովւած ծովի դէղաղէղ կոհակները, և մշտական յորձանք տալով նազնում էր կերակուր ճարեկու, մնունդ որոնելու :

Յառա՛ջ, օ՛ն, յառա՛ջ, գեղջուկ ախաբէրներ,

Մեր ոսկի ցորնի փոխան աղաներ

Վառօդ և գնդակ են սուաջարկում

Եւ մեր սուրբ վաստակն են շահագործում :

Կալւածատիրոջ ընդարձակ ագարակը դրսից ուներսից չըջապատեց գիւղացիներով : Պարոնը իւրայիններով արդէն կծկել էր, ժողովրդական ցասման սարսափից աղատւելու համար :

Ելնարար դործիքներ, որոնք երբեմն կերտել էին
այդ գեղեցիկ դղեակը, այժմ սկսեցին անխնայ քանդումի
գործը : Բահ ու փէտառ, բրիչ, քլունկ, տապարն ու
մահակը հարւածում, ծակում, փշում և փորում էին :
Մարմարեայ քարերը, թանկագին հայելիները փշուր փը-
շուր եղան, նկարուն և գունազարդ աղիւաները, ար-
ձանները կոտրւեցան, շնութիւնը դարձաւ մի վայրենի
աւերակ, մոլոզներով և կոէժներով ծածկւած, փոշու-
ամպերով շլորչւած :

Եւ մարդիկ վայր ու վեր էին անում ինչպէս մըր-
ջիւններ, բաւականութեան և վրէժինողութեան ա-
ղաղակներ արձակելով : Միւս կողմում բազմու-
թեան ամենամեծ տոկոսը դատարկում էր շտեմարանների
ցորենները և գիւղ փոխաղբում :

— Այս տակաւին բաւական չէ՝ պէտք է կրակ տալ,
այրել ու մոխիր դարձնել աւազակ գողերի այս որջի վեր-
ջին մնացորդներն անդամ : Զաւակիս հողէառ հրեշտակի
սեւ ուրւականը թո՛ղ էլ տեղ չգտնի, չցցւի տչքիս ա-
ռաջ, չիշեցնէ ինչ այն ահաւոր բոպէները, ասում էր
իվանը, որի ձայնը յուզմունքից դոզդողում էր, իսկ աշ-
քերը ուժգին վայրացումից կարմրատակել էին,

— Կրակ . . . հրդեհ . գոռում էր նա :


— Կրակի բոցերը միայն կարող են մաքրել այն աղ-
տեղութիւնը, որ դարերի ընթացքում այստեղ է ամբար-
ւել . ամենակուլ հրդեհի կերակուր պիտի դարձնել այս
անիծեալ շնութեան աննշան բեկորն անդամ, ուր դա-
նակոծ եղաւ մինուճար որդիս, և վայրազի մտրակի
հարւածի տակ իր շունչը աւանդեց, աւելացրեց մի հա-
սակաւոր գեղջուկ, և լուծեց իւղի մէջ տղկած լաթի մի

կտոր և շպրտեց դէպի իսոսի ու վառելափայտի դէպը . . .

Ծխումը սկսւեց, մուխի ամպերը դանդաղօրէն բարձրացան օդի մէջ, և բամբակի սեւաներկ քուլաների նման իրար վրա չարւելով, իրարու յենլով ելնում էին եթերաշէն սանդուխների աստիճաններով, որպէս զի տանել հասցնել կարողանացին վրէժի և ցասման աստծու գահոյքին, նրան մատուցանէին, հրդեհ բուրվառի մէջ այրուող, իր ցանած սերմերի փոխարէն գոհունակութեան խունկը, նրա բուրմունքը: Բոցերը, հրեղէն սխները ինչպէս գալարւող օձ, ոլորւելով սաստկութեամբ դուրս էին ժայթքում հրէշի երախից, մերթ ընդ մերթ նրանք այնպէս էին թշացնում, որ շրջակայքը զարգանդ էր բըռնում :

Հրդեհաձիգները շուրջանակի բոլորած, նայում էին շար, ափսոսացող և զայրագին կերպով, ասես նրանք մտածում էին թէ ինչո՞ւ այս ամենը այսպէս, ի՞նչու ոչընչացնում են իրենց աշխատանքը, իրենց արդիւնաբերածը, իրենց ձեռակերտը, ինչո՞ւ են այս բոլորը կրակի ստամքաը լցնում:

Բոցերի կարմիր հեղեղը լափում էր ամեն բան. ծուխը, թանձր մթագին մուխը, պալան պալան բարձրանում էր, և ականատես ժողովուրդը քրքջում էր . . .:



Զ.

Այս օրերին չէնը արտասովոր շարժունութեան մէջ
էր, կնանքը նոր արտայայտութիւններով հրապարակը
գրաւել էր: Գիւղում երեւում էին բազմաթիւ այր մար-
դիկ, զինւորականներ իրենց զէնքերով և ծիերով:
Սրանց պետը մի ուժեղ խմբակով կերպնացել էր գիւ-
ղապետի տանը և՝ այնանեղ զինւորական ատեանի փո-
խել: Զինուորները իրենց ծիերով բաժանւած էին գիւ-
ղական աների վրա. իւրաքանչիւր տուն, մէն մի շինա-
կան ընտանիք պարտաւոր էր կերակրել ու պահպանել
իրեն բաժին տրւած զօրքերին և ծիերին: Շինական հա-
մայնքի վրա դրւած էր մի քանի հազար ըուբլու տու-
գանք, որի գտնաման համար ու է միջոց չէին ինտա-
յում . . . :

Սուգն ու շիւտնը բռնել էր գիւղը, նա ենթարկ-
ւած էր էկզէկուցիայի . . . համապատի . . . Զօրախումբը
եկել էր գործադրելու այդ, պատուհասելու ըմբոստ ժո-
ղովուրդը, որը յանդգնել էր կալւածատիրով դէմ ել-
նելու . . . :

Էկզէկուցիա . . . համապատի ժ . . .

Ի՞նչ սարասափելի հաշիւններով լուռմ են այս անուն-
ները Ռուսաստանի գիւղերում: Սա մի միջոց էր, մի
գործիք էր ըստ ամենայնի սպանմելու, խեղգելու գիւ-
ղացու, մտածող մարդու իւրաքանչիւր ազնիւ ձգտումը,
բարձր տենչերը:

Համապատի ժ . . .

Դա բոնապետների և շահագործողների յղացած ուսարքած մի մեքենան է, որով նրանք իրենց տիրապետութիւնը յաւերժացնելու, հարստահարելու համար իւղում են նրան օրէ օր, զարդացնում են . . .

Գիւղը վերածւած էր ընդհանրական մի բանափ, մի դժիսեմ տանջարանի, ո՛ւր ամէն ինչ վաճառքի էր հանւած, ուր մարտկների հարւածների տակ մերկամարմին մարդիկն էին մեռնում, ո՛ւր վայրենի գաղանական կիրքերը բաւականացնելու զանազան ձեւերը գործադրում էին հրապարակով, կանայք, ամեն հասակի կանայք, բըռքարւում էին գուեհիկների ձեռքով . . .

Գիւղը սրիւն արցունք էր թափում, նաև տքում էր, նա՛ ցաւից ու վշտից գալարւում էր :

Կալւածատէրն ու իր արբանեակները, գիւղապետն ու տէրտէրը, զինւորն ու ոստիկաննը, կողակն ու աև հարիւրեակայինը գիշեր ու ցերեկ լիք սեղանների շուրջը, օղիի բաժակները ձեռներին, խնճոյքներ էին սարքում, խրախնակներ անում, գոհաբանական աղօթք մատոցանում ամենակալ աստծուն, նրա կենացը բաժակներ կոնծում, նրան խունկ ծխում . . .

Նրանք սարքում էին և զոհի, կենդանի, մարդկային զոհաբերութեան սեղաններ, ընտրում էին գեղեցիկներին և երիտասարդներին իդական սեռից, նրանց մերկ շարքերով շրջապատում իրենց կերուխումի սեղանները, և հրամայում զինւորներին որ գւարճանան նրանցով . . . կրենց աչքերի առաջ, Աստծոյ աթոսի պասաւամդանի տակ . . .

Մերկացնում էին ձեռք ընկած տղամարդկներին, սառ

ջուր ածում վրաները, կանգնեցնում կամ պառկեցնում
սառոյցի վրա և ծեծում անխնայ, թակում փայտերով,
ճիպուներով և կողակի մարակներով . . .

Եատ քիչերը մնացին գիւղում, փախան : Ո՞վ կարու-
ղացաւ՝ հեռացաւ, իսկ մնացողների մեծագոյն մասը ըն-
կաւ կառավարութեան ճանկը : Դրանց մէջն էր և Գուր-
գէնը, որը երկար թափառումներից յետոյ դարձեալ եկել
էր Բէկախն օգնելու :

Բէկախն կրակ էլ կտրել, նա ո՞չ հանգիստ ունէր, ո՞չ
դադար, նա իր ջանքերն ու աշխատանքները բիւրա-
պատկել էր, իսկ հոգեկան տանջանքները սաստկանալով
աւելի ևս հրահրում էին նրա եռանդն ու բորբոքը . . .

Զմիոնն էր, Ռուսաստանի ձմեռ, սովատանջ գիւղ,
սովի հետ էկզէկուցիա . . .

Օրը երեկոյանում էր :

Կողակներից մէկը բանած մի գիւղացու, դուրս
քարշեց դրան շէմքից, ձգեց ուների տակ և սկսեց
հաստակրունկ կօշիկներով աքացիների հարւածներ թա-
փել գլխին, երբ ուները յոգնեցին նա գործ գրեց
ձեռները և մարակնակայկան . . . կաշւէհիւս դալար մըս-
րակը դվշովում էր օդի մէջ, ոլորւելով ճեղքում և շփա-
ցնելով իջնում էր գետնատարած շինականի մարմնի
վրա . . .

— Դէհ, շո'ւտ արա, շո'ւն, յիմար քեզի, գնա՛ և
շուտով ձիուս համար գարի ճարիր, թէ ոչ քո՛ սաստա-
նայի շաժին հոգուդ կտորները եղունգներիդ ծայրերից
գուրս կը քաշեմ, գոռում էր կողակը :

Մի այլ տեղ մի քանի զինուորներ մի խրճիթից դուրս

բերին տան վերջին անսառնը՝ մի մատաղահաս երինջ,
եղջիւրներից բանած, սկսեցին ձեռելով տանել դէպի պա-
հակատեղին։ Երինջի յետեւից վազ էին տալիս ափրոջ
մանկահասակ փոքրիկները, աղիողորմ ձայնով լալիս էին,
աղաչում էին իմայել իրենց, չտանել իրենց վերջին յոյսը,
ապաւէնը, բայց ի զուր, նրանք անողորմ էին . . .

Խաղաղ, մարմանդ էր գիւղը, գերեզմանական ամս-
դորրութիւնը, դահիճների սիրած թագաւորութիւնը յաղ-
թանակել, աիրապետել էր։

Հանգիստ չէր միայն Բէլկան։ Նրա վէս, ըմբոսա
ոգին խռովւած էր, ինքնապաշտպանութեան սրբազն
զգացումը, բնազդը դադար չէր տալիս նրան։

— Ի՞նչ անել, մտածում էր նա, ի՞նչ անել . . . Մի
աշխարհացունց շարժում, մի յեղաշըող ցնցում պէտք
է, ա'յդ պէտք է քնած Ռուսաստանը արթնացնելու հա-
մար, ա'յդ պէտք է յոխորտացող շահագործողներին,
արիւնարբուներին զսպելու, նրանց չափ ու սահման դնե-
լու համար . . .

Նա ծրագրեց մի յանդուգն ձեռնարկ, վճռեց և
գործի սկսեց։

Երեկոյ էր։

Շինական եկեղեցու զանգակները մնում ձայնով զօ-
ղանջում էին, հրաւէր էին երգում, բարեպաշտներին ե-
րեկոյեան աղօթքի կանչում։

Զինւորական գլխաւորի տանը երաժշտախումբը նւա-
գում էր ցարօրներգը, յաղթական մարշը, զինւորները
ուրբաների աղաղակներով օդն էին թնդացնում, միո-
զոցներում թափառում էին հստ հստ արբածներ, մերթ
ընկնելով։ մերթ մոլոալով։

Զանգահարումը յանկաբծ տրագացաւ, և սրա հետ
միտժամանակ, թագնւած, հրապարակում չերեւցող գիւ-
ղականների երկանու խմբերը դէպի եկեղեցին դիմեցին:
Հրաւէր կոչնակը արտասովոր էր՝ աղէտի, վտանգի նը-
շան . . .

Եկեղեցու գաւթում մեծ քաղմութիւն էր հաւաք-
ւած, տիրում էր զայրացկոտ և զրգուած տրամադրու-
թիւն, անհամբեր և սպասողական վիճակ:

Ժամերգութիւնը սկսւած էր, տրախ էր տէրտէրը,
սուամոքը լիք, գլուխը տաք, գրպանը հարուստ, աչ-
քերը կարմրած, նա կանգնած սեղանի առաջ ստեա-
նում, բազկատարած, աչքերը առաստաղին յառած, վա-
րերան և ջերմեանդ աղօթում էր երկնաւոր հօրը, գո-
հանում նրանից և խնդրում որ նա . . . «յիշէ՛», պաշտ-
պանէ, զօրացնէ, երկար կեանք և երջանկութիւն տայ-
կայսեր, իշխաններին, զօրազլուխներին, ազնւականնե-
րին . . . խաղաղութիւն աշխարհին . . .» :

Տիրացուները բարձր ձայնով շարունակ կրկնում էին
«ամի՞ն» :

Այս ժամանակ եկաւ Բէլկան շրջապատւած մի խումբ
կանանցով, հագին պարզուկ, անպանոյն մի շրջազգեստ
կարմիր գոյնով, արձակ մաղերը մի գունաւոր թաշկի-
նակով կապած :

Տեղի ունեցաւ յանկայս մի խորհրդակցութիւն, և
նախապէս կազմակերպւած ուղղութեամբ նրանք շարժ-
ւեցին :

Բէլկան խնամքով հանեց իր ծոցումը ծրարած կար-
մրագոյն մի չիթի կտոր, կապեց ձողի ծայրին, ընկաւ ա-

ուաջ և դրօշակը բարձրացրեց : Ժողովուրդը հետեւեց նրան ցնծալի աղաղակներով . իւրաքանչիւր մարդ հանեց իր քղանցքների տակ թագցրած տապարը , Ռուսաստանի գիւղացու սովորական զէնքը և առաջ շարժւեց :

Կարմիր դրօշակը ծփում էր և նրա վարդագոյն թեւերի վրա կարած սպիտակ տառերը՝ զերթ անմեղունակ աղաւնիներ և կարսապներ , իրենց շարւածքով ձեւացնում էին հետեւեալ պարբերութիւնները . —

— Անկցի՛ բանապետութիւն

— Կեցցէ ժողովրդապետութիւն

— Անկցի՛ն դասակարգացին խտրութիւնները

— Կեցցէ հաւասարութիւնը

— Կեցցէ Սոցիալ Դէմօկրատիան

Եւ ճնշւած , հարստահարւած մարդկութեան . հաւատքի հանգանակ մարսէլիօգի գոռ հնչիւնները իրենց խրախուսիչ ելեւէջներով լցրին օդը . . .

Ոտքի ելաւ թմրած գիւղը , ջարդւած , քաղցած պատիւը խլւած գիւղացին ,

Ժողովուրդը զրո՞ն տւեց :

Զարթնեց պարզ սրտերի լայն խորշերում քնած առիւծը , և նա՛ դարձեալ , որպէս անընկճելի մի տիտան , որպէս անմատչելի մի ժայռ , ցցւեց իր թշնամիների դէմ :

Տէրտէրը ժամից դուրս էր եկել և գնացել բաղմել խնձոյքի սեղանի գլուխը :

Ամենքը խմում էին :

Շատերը արբած էին :

Ամենքը զւարճանում , պարում ու երգում էին . . .

Զինուորների մի խումբ՝ զէն ի ձեռին , ճամփորդելու

պատրաստ, շրջապատել էր կալանաւորների մի խումբ։
Սպան մօտեցաւ, հրամայեց զինւորներին որ հրացանները
փամփուշտներով լցրած, ուղղեն ձերբակալեալների վրա։
և այս ժամանակ զինւորներից մի քանիսը մօտեցան կա-
լանաւորներին և սկսեցին խուզարկել։ Գործողութիւնը
երկար տեւեց, ցուրալ սասակի նեղում էր անապատսպար-
ձերբակալեալներին, որոնց մերկացրել էլ էին։ Խուզար-
կումը վերջանալուց յետոյ նրանց երկերկու իրար շլթա-
յեցին բազուկներից, ապա՛ սարան դարձեալ մօտեցաւ և
ասաց խստօրէն։

— Խիստ մեծ զգուշութիւն ձեռք առէք, ո՞չ մի կառ-
կածելի շարժում չներէք նրանց, շլթողնէք ճամփին ու և է
մէկի հետ խօսեն կամ նայեն, այս չանացողներին
անմրջապէս հրացաննազարկ կամէք . . . սպան ոտքի վրա
օրորւում էր, օրօրւում էին և զինւորները . . .

Մութ էր, խաւարը կոխեց . . .
Ժողովրդական գրոհի ամենայաղթ շարքերը ոգեւոր-
ւած՝ որոտալից փոթորկեցին . . .
Շատ չտեւեց այս փոթորիկը, նա եղաւ սաստիկ,
ահեղ թափով, բայց և շուտով խտղաղւեց . . .

Ամին բան վերջացաւ . . .
Գիւղն այլեւ ազատ էր, յաղթական գիւղացիք շր-
ջապատած իրենց աղատած հարազատներին կորովալի
շեշտերով երգում էին . . .

Ազատւած էր Գուրգէնը։

Հրճւանքի մէջ էր Բէկան . . .

Եէնը աղատւած էր պատուհասողներից . . .

Ե.

Ծուռաստամնը սպրում էր իր պատմական, արեւելացունց մնջ յեղափոխութիւնը :

Արեւելքի և արեւմուտքի սահմանների վրա կեցած մայր երկիրը երկունքի մէջ էր, նրա ցաւերը, նրա բարձրակոչ տաղաղակները տարածում էին ամենուրեք . . . Ողջ աշխարհը անհամբերութեամբ սպասում էր երկունքի վախճանին . . . նորածիննը ամենքին էլ հետաքրքրում էր :

Նոր գաղափարների, փրկարար մկրտունքների աւանագապահ, առաջամարտիկ բանակը, աշխատաւորների, բանւորների դաստկարողը, մէկ մարդու նման ոտքի եւլու, երբ տրւեց ազգանշանը, երբ առաջին անգամ կիրակոտ հարաւը, ապստամբութեան, ընդհանուր գործադուլի ելաւ, երբ Բ . . . քաղաքում Հնչակեան դրօշը ծածանեց 1904 դեկտ. 14ին . . . հարաւի տաք հողմը անցաւ, սուրաց հիւսիսի սառուցեալ գաշտերի վրայով, ցնցեց և ըմբռաստութեան կոչը շնչաց . . .

Մէկ տարի չանցած սկսաեց ընդհանուր գործադուլը, դուրս եկան Ծուռաստամի լաւագոյն զաւակները պատնէշների վրայ, հնչեցնում էին փողը, չեփորը և նրա ձայնով սարսափեցնում տիրապետողներին :

Կոփուը բորբոքւեց, դասակարգերը իրար դէմ ելան : Անհաւասար պատերազմ էր :

Մի կողմում կօնդնած էր յանուն գաղափարի, յանուն տանիջւած մարդկութեան երջանկութեան, կեսմքը

նորդաբերող դասակարգը . միւսում՝ շահագործողների ,
այլակերների բանակը , իր զինուորական և ռազմական
ահեղ պատրաստովիններով :

Մէկ ծայրից միւսը վրդովւեց Ռուսաստանը , ամէն
տեղ միեւնոյն տեսարանն էր պարզուում . արիւն , կոսո-
րած , կողոպուտ ու թալան , գնդակաղարկ ու կա-
խաղոն . . . :

Կատղել էր հիւսիսի արջ՝ մարդկութեան ամենա-
մեծ գահճներից մէկը իւր վոհմակներով . օրհասական
մարտ էր մլում : Նա գործի էր կանչել տրամադրելի բո-
լոր յայտնի և անյայտ ոյժերը : Աւ հարիւրեակների՝ վատ-
կաի երկրագուռ վարձկան հորդաններին ձգել էին ժո-
ղովրդի վրա :

Քաղաքացիական պատերազմը իր ամերոջ թափով ,
իր բոլոր գոյներով և ահեղ երեւոյթներով տիրապետում
էր Ռուսաստանը . . .

Բռնապետութիւնը տատանւեց իր հիմքերի վրա ,
դողաց , վախեցաւ , տեղի տւեց և խոնարհւեց ժողովրդի
պահանջների առաջ . . .

Ժողովուրդը յաղթանակեց , նա իր ընսարեալ ներ-
կայացուցիչներին ուղարկեց իր բաղդը անօրինելու , իր
ու օրւայ համար հոգալու :

Մինչ ժողովուրդը և նրա բարեկամները տարւած էին
շինարար , հասարակական բարենորոգչական գործով և
ծրագրում , նախագծում էին երկիրը երջանկացնելու մի-
ջոցներ , բռնապետականները , շահագործողները և հոգե-
ւորականները վերսկսեցին գաղտնօրէն դաւել , որոգայթ-
ներ լարել . . .

Զանցկացաւ երկար ժամանակ . . .

Եւ մի պահ՝ խաղէութեամբ տեղի տւող բռնապետութիւնը լարեց իր բոլոր ոյժերը և երբ հաւաստիացաւ թէ պիտի յաղթանակէ, վայրենի հեգնութեամբ բռնեց ժողովրդական ներկայացուցիչների ձեռներիցը և ասաց . . .

— Գնացէ՛ք . . . ձեր տեղը այստեղ չէ, դուք իմ ժողովրդի ներկայացուցիչները չէք, դուք այլադաւանէք, այլազգի էք, Ռուսի մաքուր արիւն չի հոսաւմ ձեր երակներում . . .

Սւենների փայլը չողաց ժողովրդական խորհրդարանի պատուհանների վրայ, հրացանների և թնդանօթների որոտները գոռացին .

— «Դուքս կորէք այստեղից, ինքնակալ կայսրը այսպէս է հրամայում» :

Զայրացած լնտրեալները կորագլուխ թողին խորհրդարանը և հեռանալուց առաջ կանչեցին հպարտութեամբ .

— «Մեռաւ Դուման, կեցցէ՛ Դուման»

Ընտրեալները վերադարձան իրենց ուղարկողների մօտ և պատմեցին իրենց լսած, տեսածը :

Աստծու երկրաւոր փոխանորդի և նրա օձեալի խարէութեան ամբողջ ահռելիութիւնը պատկերացաւ ժողովրդի աչքին :

Աստծու շուշը, ժողովրդի բարեգութ հայրը կարգադրեց որ ի՞նչան ուրախութեան ամէն տեղ տօն, խրախճանք, համսդէմներ սարքեն . . .

Սկսեց : . . .

Ամենուրեք հրէական ջարդ :

Կովկասում հարեւան ժողովուրդների ազգամիջեան
իրարակոտոր կոիւը արեան ճապաղիք ստեղծեցին . . .

Ժողովրդական բոլոր գործիչներին բանտ ու աքսոր,
գնդակ ու չւան բաժին հանեցին . . .

Հալածանք և մահ էին տալիս լեհերին, ֆիններին,
լստիչներին և առհասարակ բոլոր «օտարներին»:
Անինայ սպանում էին ուսանողներին և բանոր-
ներին:

Ամենատեսակ հրանոթների համազարկների ճարճա-
տիւններն ու որոսները միլիոնաւոր թշւառների ողբի և
բողոքի ձայնները խեղդեցին:

Կախաղանների չւանների և ճախարակների ճրճոռում-
ները ժողովրդակործան մահերգներ յօրինեցին:

Աշխարհի տէրերը՝ թագակիրներն ու իշխանաւոր-
ները գւարճանում էին:

Ա . . . քաղաքն էլ պատրաստում էր հանդիսակա-
տարութեան, և Կրան աշխատում էին արտասովոր շքե-
ղութիւն տալ ։ այստեղ է՛լ աւելի ցայտուն կերպով պիտի
հրապարակին իրենց յաղթանակը, որովհետեւ «Զհուդ-
ներ, Արմեաշկաններ (առաջինը՝ հրէաններին, երկրորդը՝
հայերին արւած անարդական կոչումներ) և ուրիշ այլա-
ցեղ տարրեր, օտարներ, ուսանողներ և բանորներ
շատ կային։ Հայերն ու հրէանները՝ բացի հայ ու հրէա լի-
նելու յանցանքից, հարուստ տներ, խանութներ ունէին։
իսկ ուսանողները և բանորները պիտի վարձատրւէին
ներկայացուցչական ժողովը Սօց-Դէմօկրատ պատգամաւոր
ուղարկելուն համար։ Եւ ահա հարստութեան հրդեհումը
և կողոպուտը, հրդեհ, որի բոցերը ընդունակ էին լուսա-

զարդելու ամբողջ շրջակայքը, իսկ միւսների առաստարինը կարող էր յագեցնել բազմաթիւ մոլեգնուաների և հարբեցնել սեւհարիւրեակային հորդաների . . .

Քաղաքացիները ձգտեալ դրութեան մէջ էին :

Ա. . . ի խեղճերի թաղամասում գտնուում էր քաղաքացիների ընտրեալ ներկայացուցիչ և . ի տունը, ուր հաւաքւել էին երիտասարդ մասւորականները և յեղափոկան, քաղաքական կուսակցութիւնների անդամներից և զեկալարիչներից շատերը և մտածում էին գալիք սարսափներին դիմագրելու, ինքնապաշտպանութեան, աղէսիթափը, ուժգնութիւնը մեղմելու մասին :

Ժողովը բազմանդամ էր. մասնակցում էին տւելի քան հարիւր հոգի երկթեռ երիտասարդներ : Այստեղ էր Բէլկան, այստեղ էր և Գուրգէնը՝ Հնչակեան մի քանի տասնեակ ընկերներով :

Զարդը սկսեց . . .

Պատգամաւոր և . ի տունը պաշարեցին . . .

Կործանարար, վայրենի յարձակումը յանկարծակիֆքերից ներախններին, և նրանք հազիւ միջոց գտան իրենց ունեցած անբառական զէնքերով դիրք մտնել ու դիմագրել . . .

Ինակարանի պատերը մաղ դարձան թափւող գընդդակների տակ, բայց թշնամին չէր համարձակում մերձենալ նրան :

Վայրենի խուժանը՝ մոլեռանդ և գաղան կիրքերը բորբոքած, գոռում էր .

—Մա՞ն բոլոր օտարներին, մա՞ն սօցիալիստներին . . .

Պաշարւածները ոգեւորւած ձայնով երգում էին

սարսափը վտանգն, ու թշնամին ու ստոյգ մահը արհա-
մարհելով :—

... «Վեհ գաղափարի համար ընկնելով

Զեն կորչիլ անհետ պատւի զոհերը,

Նոցա անունը յաղթական երգերով

Պիտ' յիշեն յեանորդ մեր աերունդները ...

Ողջ քաղաքը մսունած էր սոսկումի, հրդեհը լա-
փում, մոխիր էր դարձնում հրաշակերտ շնուածքները,
մոյգ կարմիր բոցերը շիկացած՝ բօս օձերի նման, թանձը
ու ժահաճոտ ծխամպերի միջում պալուլում էին ...

Փողոյների սալայտակները կարմիր ներկւեցին, սո-
ւակները արիւն կրեցին ...

Գեղեցկաչն առարկաների ջարդուփշուր կտորտանիք-
ներից բլուրներ կազմեցին հրապարակների վրայ :

Հարիւրաւոր մարդկանց անչացրած և յօշունած
դիակները ծածկել էին սողուտանների մակերեւոյթը :

Ամբոխը վլստում էր ամենուրեք, նա չորս կողմե-
րում մահ և աւերած էր ափուում միայն :

Անպաշտականները, ինքնապաշտպանութեան միջոց-
ներից զրկւածները, անխուսափելի պատուհասից ազատ-
ւելու համար, խելակորոյս և յանդուզն, փողոցներն են
վազ տալիս : Ահա՛ նրանցից երկու հոգի, երկուսն ել
կանացք, հրէուհիներ .

Խուժանը իր հազարաւոր աչքերով աեսաւ նրանց
և գիշակերների պէս վրա տւեց ու բռնեց ... մի խուժը
գետին գլորեց ծոցաւոր կնոջը, պատասեցին զգեստները .
մէկը սրով ճեղքեց նրա վորը, արգանդից դուրս բերեց
անկազմակերպ զանգւածը ապագայ մարդու, ներկւած

մօր վէրքից հոսող կարմիր հեղուկի վարդագոյն բծերով . . .
մի ուրիշը դարձեալ մարդ, քանդեց բարձի կարերը,
դուրս հանեց փետուրներ և նրանցով լցրեց արգանդը . . .
Երկրորդ խումբը զբաղւած էր երիտասարդ հրէուհիով,
նրան մերկացնելուց յետոյ տարածեցին գետնի վրա, թե-
ւերը տարածեցին և խաչ ձեւացրին նրա մարմնովը, ա-
պա՝ հերթով սկսեցին Ակել . . .

Խուժանը քրքջում էր . . . Խնչպէս է, ասում էին
նրանցից շատերը, խաչելը լաւ է . . . եթէ լաւ է մինք էլ
ձեզ բաժին կտանք, դուք մեր Սատւածը խաչելով
սպաննեցիք, մինք էլ դրա փոխարէն ձեզ խաչելով կը
Ակենք . . .

Լ . . . ի տուն պաշարողները կատաղած ներսինների
դիմադրութիւնից և յուսահատած նրանց ողջ ողջ բոնե-
լու ցանկութեան մէջ, կրակ տւեցին տանք . . .

Հրդեհը բոնեց բնակարանը, պատուհաններից ժայթ-
քող հրեղէն բոցերի և սեւին ծուխի ամպերի միջից դուրս
էին ցատկում պաշտրւածները, որոնք տակաւին վայր
չլնկած, գնդակախարով սպանում, անշնչանում էին
օդի մէջ և ապա դիակնացած գետին բնինում ահագին
բարձրութիւնից :

Տունը այրւում էր, խարոյկը բորբոքւում էր, հուրն
ու բոցը լափում էին անարդել, մարդկային մարմնի խո-
րովածի, խանձումի ժահաճուրը լեցրել էր միջնորոտը :

Յանկարծ, բնակարանի կիսայրած մի դուռը ներսից
ընդունած ուժեղ հարւածներից խորտակեց և այնտեղից
դաւրս ոլացաւ մէկը. խուժանը նկատեց այս և դրան
աւեց :

— Բանէք . . . ջհուդէ է . բանեցէք սօցիալիստ է գուշառում էին :

Մի քանի բոպէ յետոյ բազմութիւնը շրջապատեց նրան, բայց ո՛չ ոք չէր համարձակւում առաջինը մօտենալ նրան . . . հեռուցից նրա վրա թափեցին քարեր և զանազան առարկաների կտորտանքներ, փայտի մի մեծ կը տոր զարկեց նրա գլխին և գլխարկը թոցրեց . . .

— Աղջիկ է, աղջիկ է նա, հոհուաց ամբոխը, նկատելով ընկած գլխարկի տակից ուսերի վրա թափւած կանացի վարսերի հարուստ հիւսքերը . . . և այս բանով աւելի զայրացած ու սրասապնդւած նրանք մօտեցան և բռնեցին նրան .

Պատառուտեցին, ծւիկ ծւիկ արին նրա զգեստները :

— Վայ . . . վայ . . . ի՞նչ գեղեցիկ աղջիկ է, ի՞նչ սիպտակ ծիծեր ունի . . . ի՞նչքան փափուկ մարմին, ի՞նչպիսի քնքուշ մորթ . . . աղաղակում իւրաքանչիւր ոք կրքու ձայնով, մօտենում նրան, մազերից քարշ տալիս, կճմտում մարմինը, հպում ստինքները և լպիրշ խօսքեր ուղղում :

Նրան բոլորովին մերկացրին . խուժանը իր գաղանացին կարմրած աչքերի հայեացքը սեւելուած էր նրա վրա . . .

Իսկ նա՞ . . . նա՛, այդ արձանացած, մարմնացած սրբութիւնը, գաղափարի անխոցելի ողին, աչքերը սըրբազան հուրով լցրած, երբեմն իր կարեկից հայեացքներն էր շրջում ամբոխի վրա, իսկ երբ նրանք մօտենում էին իրեն և հարւածում, նա՛ աչքերի կրակով շանթում էր, մոնչում էր ու ձչում, ձեռներով ճանկրտում, ատամնեւ-

բոլ խածոտում վաւաշոտ գաղանների վաւաշոտ թաւ-
թերը . . . :

Ամբոխը սուլում, շւայնում էր գիւացին հաճոյքով :
— Բեզ կեանք կը բաշխենք, մոլորւած աղջիկ, խեղճ
ես, ափասա այդ գեղեցկոթեանդ, ասա՛ «կորչի սօ-
ցիալիզմօր, գարձի ե՛կ . . .

Այսպէս էին ասում ամբոխի միջից շոտ ձայներ, և
խուժանը մի պահ քարացած լռութիւն էր պահում պա-
հում պատասխանը լսելու համար :

Օրիորդը ցնցւում էր ամբողջ մարմնովը, նրա ներ-
քին յոյզերը, վրդովմունքը այնքա՞ն սաստիկ էին և ու-
ժեղ, որ նշանաւոր արագութիւն, զարկ և թափ տուին
արեան հոսանքին, և կենաչարժ հեղուկը ա՛յնպիսի վաղ-
քով էր հոսում, արջում յորձանքներ տալիս երակ-առ-
ւակների մէջ, որ այդ ամենը նկատելի էին նրա մորթի
վրա . . .

— Անդիտակից և կոյր ամբո՞խ . . . իմ թշւաս, իմ
սիրած եղբայրներ և բաղդակիցներ, այս բոլոր զոհաբե-
րութիւնը ձեզ համար է, այս զրկանքն ու տանջանքը
ձեր փրկութեան, ձեր երջանկութեան համար . . . բայց
դուք, դուք ձեր խակ ձեռներով ձեր սեպհական եր-
ջանկութիւնն էք խորտակում, ձեր կորսական գերեզ-
մանը փորում . . .

— Եսքիր . . . քարոզի ժամանակ չէ, աղաղակեց ամ-
բոխը և անլսելի դարձրեց օրիորդի վերջին խօսքերը . . .

— Դէ՛, շտապիր, ասա «կորչի սօցիալիզմը», քանի
դեռ շուտ է, թէ ոչ շանսատակ կ'անմնք . . .

Զոհը վէսօրէն նայեց շուրջը և գոչեց լիովթոք ձայ-
նով . . .

—Կեցցէ՞ սօցիալի՞ զմը . . .

Խուժանը իրար անցաւ, մէկը հաստակրունի Եւ իլլի
մի աքացիով նրան գետին տապալեց, իսկ մի երկրորդը
բարձրացրեց մի սալքար, տարութերեց գլխիվերում և
ուժգին կերպով զարկեց գետնատարած տղջկայ գլխին . . .
գլուխը տափակեց, սալացու սալայտակի և ծանր քառ-
րի մէջտեղումը . . . արիւնի և ուղեղի կաթիլներն ու կը-
տորները թռան, բծաւորեցին շվչապատողներին և տա-
կաւին թպրասցով սպիտակ մարմինը . . .

Ամբոխը քրքիում և հրճուում էր դարձեալ . . . և
անդադար աղաղակում էր.

—«Կորչի՞ սօցիալիկմը» :

Բէլկաի անհնացած գիտակը, գետնի հետ հաւասա-
րեցրած գլխով, ընկած էր հայրենի քաղաքի, աւերակ-
ների կոյտերով և սեացած պատերով զարդարած հրա-
պարակի վրա . . . իսկ նրա վերջին խօսքերը տակաւին
նշուում էին մարդասպանների ականջներին և կրկնում . . .

—«Կեցչէ ՍՕՑԻԱԼԻ ԶՄԸ» . . .

1909 Եռյեմ. Կ. Պօղիս

3

Copy.

6284

2013

